Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստան

HELSINKI CITIZENS ASSEMBLY

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՌԱՁՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ 2020-2022 ԹԹ. ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023

Սույն հաշվետվության թողարկումը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության օժանդակության շնորհիվ: Հաշվետվությունում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության տեսակետների և դիրքորոշումների հետ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ 2020-2022ԹԹ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 5

ԱՆԴՐԱԴԱՐՁ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՁԱԽՈՂՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻՆ 5

ՆԱԽԱԲԱՆ 5

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՐԺԵՔ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԻՃԱԿԸ 6

ԱՐԴՅՈ՞Ք ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԵՑ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ 8

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 13

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ (2020-2022 ԹԹ.) ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 14

ՆԱԽԱԲԱՆ 14

1. ԱՄՓՈՓԱԳԻՐ 15

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2020-2022 ԹԹ. ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 16

3. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԱՌՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐՈՒՄ (ՄԺԾԾ-ՆԵՐ և ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐ): 19

3.1 ՄԺԾԾ-ՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ 21

4. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԵՐՐՈՐԴ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ. ՊԱՐԵԿԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ և ՕՊԵՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՆԵՐԴՆՈՒՄ: 23

4.1. ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 23

4.2. ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԱՅԻՆ ԳՈՐԾԱՐԿՈՒՄ 27

4.3. ՕՊԵՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՆԵՐԴՆՈՒՄ 31

5. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՈՒՐԴԸ և ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 32

6. ԱՌԱՋԱՐԿՆԵՐ 33

7. ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ 35

8. ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ 35

9. ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 35

10. ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆԸ ԱՄՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԱԾ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ 35

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ 2020-2022ԹԹ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԱՆԴՐԱԴԱՐՁ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՁԱԽՈՂՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻՆ

ՆԱԽԱԲԱՆ

Ոստիկանությունը տարիներ շարունակ Հայաստանի Հանրապետությունում հասարակության կողմից ունեցել է ցածր վստահություն և ընկալվել է որպես իշանությունների կողմից ընդդիմադիրների, քաղաքացիական նախաձեռնությունների բողոքի ձայնը լռեցնելու, ցույցերն արգելելու ճնշման գործիք:[1] Քաղաքացիական հասարակության գնահատմամբ մինչև 2018թ. թավշյա հեղափոխությունը ոստիկանական համակարգի բարեփոխումները կրել են ձևական բնույթ և որևէ կերպ չեն բարելավել ոստիկանության ծառայողների բարեվարքությունը, հաշվետվողականությունը, մարդու իրավունքների արժեքների նկատմամբ զգայունությունը:

Իրականացնելով ՀՀ կառավարության 638-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ոստիկանության բարեփոխումների ռազմավարության (այսուհետ՝ Ռազմավարություն) և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագրի գնահատում՝ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը (այսուհետ՝ Կազմակերպություն) ոչ միայն դիտարկել է կոնկրետ գործողությունների կատարված լինելու հանգամանքը, այլ նաև հետազոտության հիմքում, ի թիվս այլնի, դիտարկել է Ռազմավարության ընդունմանը նախորդած և Ռազմավարության իրականացման ժամանակաշրջաններում մարդու իրավունքների խախտումների միտումները, դեպքերը և ընդհանուր առմամբ ուսումնասիրել ոստիկանության վարքագծի փոփոխությունները:

Ռազմավարությամբ ամրագրված էին բարեփոխումների հետևյալ 9 ուղղությունները.

1) Նոր ոստիկանության նկարագիր,
2) Ոստիկանության կառուցվածքային մոդել,
3) Պարեկային ոստիկանության ծառայության և Օպերատիվ կառավարման կենտրոնի ներդրում,

[1] Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից 2015թ. սկսած իրականացված պարբերական հետազոտությունները ցույց են տվել, որ ոստիկանության ծառայողների գործողությունները մեծամասամբ կրել են կամայական բնույթ, պայմանավորված են եղել ոչ թե օրինականության պահանջով, այլ քաղաքական հրահանգով:

4) Ոստիկանության զորքերի ապառազմականացում, հասարակական կարգի պահպանություն,

5) Քրեական ոստիկանության զարգացում,

6) Համայնքային ոստիկանության վերաիմաստավորում,

7) Ոստիկանություն ռեֆորմի իրականացման ընթացք և միջազգային համագործակցություն,

8) Բարեփոխումների իրականացման ներառականություն, գործողությունների մշտադիտարկում և համակարգում,

9) Ռազմավարական հաղորդակցություն:

Ռազմավարության իրականացման վերաբերյալ պատրաստվել և տարածվել են տարեկան հաշվետվություններ:[1] Ռազմավարությամբ նախատեսված գործողությունների իրականացման արդյունքում, ինչպես ցույց է տրված Հաշվետվության մեջ, ոստիկանությունը պետք է ենթարկվեր կառուցվածքային և ինստիտուցիոնալ լուրջ փոփոխությունների:

Սակայն, 2022թ. հոկտեմբերի դրությամբ Ռազմավարությամբ նախատեսված 41 միջոցառումների կեսը իրականացված չէր:[2]

---

[1] https://www.police.am/%D5%B6%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/reforms.html

Դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության, Միգրացիոն ծառայության և Արտակարգ իրավիճակների նախարարության միավորմամբ ձևավորվեց ներքին գործերի նախարարություն: Իր հերթին ՀՀ ոստիկանության կառուցվածքում ներդրվեց նոր պարեկային ծառայություն ճանապարհային ոստիկանության և պարեկապահակային ծառայության փոխարեն:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՐԺԵՔ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԻՃԱԿԸ

Կազմակերպության ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ երկրում տեղի ունեցող ներքին և արտաքին քաղաքական գործընթացներն էական ազեդցություն են ունեցել իրավապահ մարմինների վերաբերյալ հասարակական պատկերացումների փոփոխությունների վրա:

---

[2] Ամբողջական Հաշվետվությունը տեսեք կից:

Ոստիկանության նկատմամբ հանրության վերաբերմունքի բացահայտումը և ոստիկանության գործունեության գնահատումը առավել ցայտուն և առարկայական են դարձնում ՀՀ իրավապահ մարմինների կամայականության և ՀՀ ոստիկանության վստահության համաթվերը[3]:

Այսպես, Կազմակերպության հետազոտության արդյունքով՝ ,Իրավապահ մարմինների կամայականության համաթվիե արժեքը 2015թ-ին եղել է ,0ե, 2016թ-ին այն նվազել է ,-6ե, 2017թ-ին աճել է մինչև ,7ե, 2019թ-ին աճել է մինչև ,35ե, իսկ 2021թ-ին նվազել է մինչև ,25ե[4]:

2018թ-ին տեղի ունեցած հեղափոխությունից հետո՝ իրավապահ մարմինների՝ այդ թվում՝ ոստիկանության, նկատմամբ հասարկության վերաբերմունքը և ընկալումները կրել էին դրական փոփոխություններ, որոնք սակայն, 2019թ-ի համեմատ սկսեցին նվազել 2020 թվականից սկսած ՝ պայմանավորված Արցախյան 44-օրյա պատերազմի, ինչպես նաև նոր կորոնավիրուսի համավարակի ընթացքում ոստիկանության ձեռնարկած ոչ իրավաչափ գործողություններով:

Մասնավորապես, Կազմակերպության իրականացրած հետազոտության արդյունքների հիման վրա հաշվարկվել է ՀՀ-ում ,Ոստիկանության վստահության համաթիվըե, որը 2021թ-ին կազմել է ,50ե: Նշենք, որ այն 2019թ-ին կազմել է ,49ե, 2017թ-ին՝ ,41ե, 2016թ.-ին՝ ,31ե, իսկ 2015թ-ին՝ ,42ե[5]: Թեև համաթվերը տարբեր տարիների հետազոտությունների արդյունքներով տատանվել են, այնուամենայնիվ, ,Ոստիկանության վստահության համաթվիե ցուցիչները միշտ գտնվել են դրական տիրույթում (30-ից բարձր): Դա խոսում է այն մասին, որ թեև մարդիկ ոստիկանությանը վերագրել և որոշ չափով դեռևս շարունակում են վերագրել այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են կամայականությունը և անօրինականությունը:

[3] Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը հասարակության զանգվածային տրամադրությունների ընդհանրացված համաթիվն է, որն արտացոլում է ոստիկանության (դատախազության և դատական մարմինների) կամայական՝ օրենքով չսահմանված գործողություններից հասարակության անպաշտպանվածության զգացումները: Համաթվի հաշվարկման համար օգտագործվել են հարցեր իրավապահ մարմինների գործունեության վերաբերյալ հասարակության գնահատականները բացահայտելու համար: Որքան շատ են ոստիկանության ապօրինությունները, այնքան մեծ է ոստիկանության կամայականության համաթիվը: https://hcav.am/police-index-10-05-2022/

[4] https://hcav.am/wp-content/uploads/2022/03/%D4%BB%D6%80%D5%A1%D5%BE%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AF%D5%A1%D5%B4%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B5%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%AB%D5%B6%D5%A4%D5%A5%D6%84%D5%BD-2021.pdf

[5] https://hcav.am/wp-content/uploads/2022/03/%D4%BB%D6%80%D5%A1%D5%BE%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AF%D5%A1%D5%B4%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B5%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%AB%D5%B6%D5%A4%D5%A5%D6%84%D5%BD-2021.pdf

ԱՐԴՅՈ՞Ք ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԵՑ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

Անհրաժեշտ է նշել, որ ի սկզբանե, դեռևս բարեփոխումների ռազմավարության մշակման և ընդունման փուլում, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները բարձրաձայնում էին, որ առանց համակարգային և արմատական վեթինգի՝ դժվար է հասնել պետության զավթման պահանջներին համապատասխան ոստիկանության ծառայությունից ժողովրդավարական պետության պահանջներին համապատասխան ոստիկանության ձևավորմանը: Իսկ ոստիկանության երկու արտաքին ծառայությունների՝ պարեկապահակային ծառայության և ճանապարհային ոստիկանության փոխարեն պարեկային ծառայության ներդրումը համակարգային լուծում չի տալիս համակարգի խնդիրներին: Բացի այդ, այս փոփոխության փուլում ևս բացահայտվեցին գործող ոստիկանության ծառայողների կրթական և մասնգիտական ոչ բավարար պատրաստվածության վերաբերյալ խնդիրներ, որոնց մասին առավել մանրամասն ներկայացված է կից Հաշվետվությունում:

Ոստիկանության բարեփոխումները առանց քրեական ոստիկանության փոփոխության չէին կարող հանգեցնել ոստիկանության արժեքային և ինստիտուցիոնալ փոփոխության՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ մարդու իրավունքների շարունակական և կոպտագույն խախտումները մշտապես կապված են եղել գլխավորապես քրեական ոստիկանության հետ: Բացի այդ, բարեփոխումների կենտրոնական վերջնարդյունքներից էր խոշտանգումների կանխարգելումը, որին ևս հնարավոր էր հասնել հենց քրեական նոր ոստիկանության ձևավորմամբ, որը մինչ այժմ ներդրված չէ:

Հանրությանը ծառայող վստահելի և հարգանքի արժանի ոստիկանությունը Ռազմավարության գլխավոր նպատակն էր: Ըստ այդմ, որպես բարեփոխումների առանձին ուղղություն հռչակված էր ,մարդու իրավունքների պաշտպանության զգայուն հարցերը, որն ներառում է նաև խոշտանգումների կանխարգելումը: Ռազմավարության 2020-2022 թվականների գործողությունների ծրագրի 5-րդ գլխի 7-րդ գործողությամբ նախատեսվել էր ,խոշտանգումների մասին հաղորդումների ուղղորդող մեխանիզմների ներդնումը, ինչը, ենթադրում էր նշված մեխանիզմների ներդրման ուսումնասիրություն, օրենսդրական փոփոխությունների իրականացում և, ի վերջո, 2022թ. ներդրված մեխանիզմով առնվազն 10 հաղորդման ներկայացում: Նշված գործողությունը, որը

ենթակա էր կատարման 2021 թ. երկրորդ կիսամյակի ընթացքում, ևս չիրականացվեց, օրենսդրական նախագծերը չմշակվեցին, իսկ մեխանիզմներն այդպես էլ չներդրվեցին:

Հայաստանի Հանրապետության ոստիկանության բաժիններում բռնության և խոշտանգման դեպքերը բացառելու նպատակով մինչև 2023 թվականը նախատեսվում էր բոլոր բաժիններում հարցաքննության համար օգտագործվող տարածքներում (աշխատասենյակներ) և մուտքերի ու ելքերի մոտ տեղադրել տեսախցիկներ:

2020թ. մայիսից ոստիկանության միայն 10 բաժիններում տեղադրվեցին տեսախցիկներ, սակայն, կարճ ժամանակ անց տեղադրված սակավ թվով տեսախցիկներն էլ անջատվեցին, որը, ոստիկանության նախկին պետ, ներքին գործերի նախարար Վահե Ղազարյանը ,հիմնավորում էե *քրեական դատավարության օրենսգրքի փոփոխությամբ՝ նշելով, որ ,անհրաժեշտությունը վերացել էե*[6]*, մինդեռ Դատախազության կողմից ամեն տարի հրապարակվող զեկույցներում խոշտանգման գործերով կարճված վարույթների մեծ ծավալը մեկնաբանվում է որպես խոշտանգման դեպքի* ապացուցման բարդություն:[7] Նշենք, որ այս ծրագրի ընդհանուր գումարը կազմել է 208 միլիոն դրամ:[8]

Այն, որ անհրաժեշտությունը ոչ միայն չի վերացել, այլ նաև ավելի է խորացել է, ցայտուն երևում է ոստիկանության բարեփոխումների 3 տարիների ընթացքում հենց ոստիկանության բաժանմունքներում տեղի ունեցած բռնության բազմաթիվ դեպքերով:

Ոստիկանության բարեփոխումների ռազմավարության գործողության 3 տարիների ընթացքում Ոստիկանության՝ մարդու իրավունքների խախտման դեպքերի ուսումնասիրության (ՀԼՄ-ների մշտադիտարկման միջոցով) արդյունքները ցույց տվեցին, որ ,բարեփոխումներիե ողջ ընթացքում ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների իրավունքների խախտման դեպքերը կրել են շարունակական բնույթ:

Մասնավորապես, որպես ելակետային տվյալ հիմք ընդունենք այն հանգամանքը, որ 2019 թ.-ին արձանագրվել է մարդու իրավունքների խախտումների **90 դեպք**, 2018 թ.՝ **181 դեպք**, 2017 թ.՝ **107 դեպք**, 2016 թ.՝ **338 դեպք**, 2015 թ.՝ **304 դեպք:**[9]

Իսկ 2020թ. ընթացքում արձանագրվել է ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտումների 192 դեպք, որը ավելի քան 2 անգամ գերազանցել է նախորդ տարվա խախտումների թիվը[10]: Ընդ որում՝ 2020 թ. առաջին կիսամյակում մարդու իրավունքների խախտման անհատական բնույթի դեպքերը կազմել են

---

[6] https://www.radar.am/hy/news/social-2555325925/

[7] https://www.prosecutor.am/myfiles/files/decrees/Full_Report_2022.pdf%281%29.pdf

[8] http://www.parliament.am/transcript.php?AgendaID=3804&day=12&month=12&year=2019&lang=arm#12.12.2019

[9] https://hcav.am/police-report-2021/

[10] տե՛ս *Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի վերաբերյալ* ՀՔԱՎ 2019-ի տեղեկանքը): https://hcav.am/police-report-2020/

ընդհանուր թվի 60.5%-ը, իսկ երկրորդ կիսամյակում գերակշռում էին հավաքների ընթացքում խախտման դեպքերը՝ 73%: 2020թ. առաջին կեսին համավարակով պայմանավորված, ոստիկանության ծառայողներին էր վերապահված, մասնավորապես, ազատ տեղաշարժի սահմանափակումները և անհատական պաշտպանության միջոցներ կրելու պահանջը վերահսկելու գործառույթը: Ունենալով իրավախախտներին պատասխանատվության ենթարկելու իրավական գործիքակազմ՝ ոստիկանները հաճախ դիմում էին ոչ իրավաչափ գործողությունների, բռնության, ներգրավում էին քաղաքացիական հագուստով անձանց՝ քաղաքացիներին պահանջներ ներկայացնելու, ընդհուպ բերման ենթարկելու գործողություններում: Երկրորդ կիսամյակում՝ հատկապես հետպատերազմյան ժամանակահատվածում, լայն թափ ստացան իշխանության գործողությունների դեմ բողոքի ակցիաները, որոնց իրականացման ընթացքում ոստիկանության աշխատակիցները հաճախ էին դիմում անհամաչափ ուժի կիրառմանը, բողոքի ակցիաների մասնակիցներին ազատությունից զրկելու ոչ իրավաչափ գործողությունների՝ կամայականորեն բերման ենթարկելով նրանց, գենդերային հիմքով ընտրողական մոտեցում էին ցուցաբերում՝ հրահանգելով բերման չենթարկել աղջիկներին: Արձանագրվեցին անգամ ոստիկանական գործողություններին դիմակավորված անձանց ներգրավման դեպքեր[11]:

2021 թ. ընթացքում ՋԼՄ-ների հրապարակումների հիման վրա արձանագրվել է ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտումների խախտման 159 դեպք: *2021 թ.-ին խախտումները նախորդ՝ 2020 տարվա համեմատ նվազել են ընդամենը 17 տոկոսով, իսկ 2019 թ. համեմատ դրանք աճել էն 43.4 տոկոսով*[12]*:* 2021թ. ընթացքում արձանագրվել է հավաքների ժամանակ կամ հավաքներին մասնակցելու հետևանքով ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտման 94 դեպք: 2020 թ. ցուցանիշի համեմատ՝ այս ցուցանիշը նվազել է 17-ով *(15.3%-ով)*: *2019 թ.-ի համեմատությամբ աճել է 45-ով (47.9%-ով), 2018 թ.-ի համեմատությամբ նվազել է 40-ով (29.8%-ով), 2017 թ.-ի ցուցանիշի համեմատ աճել է 57 դեպքով (60.6%-ով), 2016 թ.-ի ցուցանիշի համեմատ նվազել է 69-ով (42.3%-ով), իսկ 2015 թ.-ի ցուցանիշի համեմատ 107-ով (53.2%-*ով)[13]:

2022թ ոստիկանության բարեփոխումների ռազմավարության գործողության՝ մարդու իրավունքների խախտումների ամենաբարձր աճի տարին էր: 2022թ. ընթացքում

[11] Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի վերաբերյալ տեղեկանք. Արտակարգ 2020-ը, հասանելի է՝ https://hcav.am/police-report-2020/

[12] https://hcav.am/police-report-2021/

[13] Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի վերաբերյալ տեղեկանք, 2022թ., հասանելի է՝ https://hcav.am/police-report-2021/

արձանագրվել է ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման **199 դեպք**: Նախորդ տարվա համեմատությամբ դեպքերի թիվն աճել է **20.1 %-ով (կամ 40 դեպքով)**, իսկ հետհեղափոխական 2019 թ. համեմատությամբ՝ **54.8 %-ով (կամ 109 դեպքով)**:

Հավաքների ժամանակ կամ հավաքներին մասնակիցների հանդեպ ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի թիվը 2022 թ.-ին, 2021 թ.-ի համեմատությամբ, աճել է **47.8 %-ով (կամ 94 դեպքով),** իսկ 2019 թ.-ի համեմատությամբ՝ **72.8 %-ով (կամ 131 դեպքով):**

Այսպիսով, 2022թ. ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերը կրկնակի անգամ, իսկ հավաքների ընթացքում՝ ավելի քան երեք անգամ գերազանցել են հետհեղափոխական ամենացածր ցուցանիշը:

Ավելին, խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու, անձնական ազատության և անձեռնմխելիության, ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքների խախտման տոկոսային հարաբերակցությունը՝ խախտման ընդհանուր դեպքերի նկատմամբ *ամենաբարձրն է վերջին 8 տարիների ընթացքում*: 2022 թ.-ին, նախորդ տարվա համեմատ, կրկնապատկվել են առողջության իրավունքի խախտման դեպքերը՝ արձանագրելով վատագույն արդյունքը 8 տարիների ընթացքում:[14]

Խախտումների դեպքերը վերը հիշատակված վիճակագրությունը ցույց է տալիս, որ բարեփոխումների արդյունում չստեղծվեց այնպիսի ոստիկանական ծառայություն, որն իր վարքագծով և կարողություններով կտարբերվեր մինչհեղափոխական ոստիկանությունից:

Քրեական ոստիկանության և ոստիկանության չբարեփոխված մյուս ծառայությունների կողմից քաղաքացիների նկատմամբ բռնությունները, անհամաչափ ուժի կիրառումը, խոշտանգումները /Ֆիզգորոդոկի, Մարց գյուղի, Եռաբլուրի, Պոլիգրաֆ ակումբի և այլ դեպքերով/ ստվերեցին ոստիկանության բարեփոխումների շրջանակում պարեկային ծառայության ներդրման նշանակությունը և ազդեցությունը, ավելին, բռնությունների փաստերով կամ դրանց հիման վրա ոչ պատշաճ քննությունը և բռնություններ կատարողներին պատասխանատվության չենթարկելու պրակտիկան վերականգնեցին ոստիկանության կառույցի նախկին կերպարը:

[14] Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերը. Տեղեկանք, 2023թ., Հասանելի է՝ https://hcav.am/hcav-am-20-02-2023/

Ոստիկանության բարեփոխումները ներկայացնելիս պաշտոնական խոսույթը հիմնվում է 2 տեսանելի վերջնարդյունքների վրա. դրանք են նոր ձևավորված Ներքին գործերի նախարարությունը և պարեկային ծառայությունը: Հարկ է նշել, սակայն, որ ոստիկանության բարեփոխումների նախանշված թիրախային արդյունքը ոչ թե ինքնին Ներքին գործերի նախարարության ստեղծումն էր, այլ վերջինիս կառուցվածքային, կադրերի համալրման, գործառութային և հայեցակարգային արդյունավետ, գործունեությունը: Այսինքն, միայն ՆԳՆ ստեղծումը չի ապահովում ռազմավարական նշված ուղղության իրականացումը: Որպես օրինակ նշենք, որ քաղաքացիական հասարակությունը անընդունելի է համարում Ներքին գործերի նախարարի կադրային այնպիսի նշանակումը, երբ քաղաքացիների նկատմանբ բռնությունների համար անմիջական պատասխանատվություն կրող ոստիկանության ծառայողները նշանակվեցին ՆԳՆ հիմնական ղեկավար պաշտոններում:

Ոստիկանության բովանդակային բարեփոխման կարևոր ցուցանիշն այն է, որ միայն երեք մարզերի՝ Երևան, Լոռի, Շիրակ պարեկային ծառայության անցնելու համար դիմաց 1838-ը ոստիկանից պարեկային ծառայության անցնելու շեմը հաղթահարել են ոստիկանության համակարգից դիմորդներից 945 հոգին/, իսկ մնացածները շարունակել են իրենց ծառայությունը ոստիկանությունում/տես կից Հաշվետվությունը/: Անգամ որպես պարեկ ծառայելու չափանիշներին չհապատասխանող ոստիկանների ծառայության շարունակումըցույց է տալիս ոստիկանության բարեփոխումների հանդեպ իշխանության վերաբերմունքը: Պարեկային ծառայության անցնելու համար դիմորդների քննությունը կարելի էր համարել որոշ իմաստով ոստիկանության ծառայողների վեթինգ, որի արդյունքում նոր ոստիկանության կերպարին չհապատասխանող ոստիկանության աշխատակիցներից պետք էր ազատվել: Սակայն դա էլ հաշվի չառնվեց, և բնականաբար պարեկային ծառայության շեմը չհաղթահարած ոստիկանների ծառայության շարունակությունը լուրջ ստվեր գցեց հենց բարեփոխումների վրա:

Կարևոր է արձանագրել, որ ոստիկանության բարեփոխումների ռազմավարության արդյունավետ իրականացման կարևոր երաշխիքներից է պառլամենտական արդյունավետ վերահսկողությունը, որի ձևավորման կարևոր քայլ էր ներքին գործերի նախարարության ստեղծումը: Սակայն ոստիկանության բարեփոխումների ռազմավարության ողջ ժամանակահատվածում ՀՀ Ազգային Ժողովի պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի կողմից գեթ մեկ հանրային լսում այդպես էլ չկազմակերպվեց այս ուղղությամբ, հանձնաժողովը որևէ նիստ չի կազմակերպել ռազմավարությամբ ընթացքի մասին կառավարությունից հաշվետվություն պահանջելու նպատակով: Պառլամենտի գերադասային հանձնաժողովն

ընդամենը անդրադարձել է բարեփոխումներին առնչվող ընթացիկ օրենսդրական փոփոխությունների նախագծերին:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով ոստիկանության ռազմավարության բարեփոխումների 2020-2022թթ ռազմավարության իրականացման արդյունքները եզրահանգում ենք, որ՝

1. Ռազմավարությամբ նախատեսված նոր, ժողովրդավարական պետության չափանիշներին համապատասխանող ոստիկանություն դեռ չի ձևավորվել,

2. Առանց համակարգային վեթինգի, միայն հատվածային փոփոխություններով հնարավոր չի ձևավորել մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի հիման վրա գործող բարեվարք, հաշվետու և պատասխանատու ոստիկանություն,

3. Առանց իրավապահ մարմինների գործունեության նկատմամբ արդյունավետ պառլամենտական վերահսկողության չի կարող երաշխավորված լինել որևէ բովանդակային բարեփոխում,

4. Բարեփոխումների ռազմավարության արդյունքում չի ապահովվել ոստիկանության բաժիններում մարդու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից, խոշտանգումներից զերծ մնալու բացարձակ իրավունքի արդյունավետ պաշտպանությունը:

Ելնելով ոստիկանության բարեփոխումների ռազմավարությամբ նախատեսված գործողությունների գնահատման տվյալներից՝ ՀՀ կառավարությունը պետք է ձեռնամուխ լինի իրավապահ մարմինների բարեփոխման նոր ռազմավարության ձևավորմանը քաղաքացիական հասարակության ակտիվ ու բովոնդակային ներգրավմամբ:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ (2020-2022 թթ.) ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Նախաբան

Այս հաշվետվությունը ներկայացնում է ՀՀ Ոստիկանության բարեփոխումների ռազմավարության գործողությունների ծրագրի կատարման ընթացքի գնահատման արդյունքները: Գնահատումը ներառում է այն բոլոր միջոցառումները, որոնք նախաձեռնվել և/կամ իրականացվել են ռազմավարության գործողությունների ծրագիրը հաստատելու օրվանից մինչև 2022 թ. հոկտեմբեր ամիս: Գնահատումը արտացոլում է ի հայտ եկած թերություններն ու բացերը և նպատակ ունի Ոստիկանության բարեփոխումների ռազմավարության գործողությունների իրականացման ընթացքը դարձնել ավելի համակարգված և արդյունավետ, ավելի թափանցիկ և հաշվետվողական:

Այս գնահատումը կարող է նաև օգտակար լինել Ռազմավարության գործողությունների ծրագրի հաջորդ տարիների միջոցառումների պլանը կազմելիս, քանի որ սա անդրադառնում է նաև միջոցառումների պլանավորման թերություններին:

Գնահատումը Ռազմավարության գործողությունների ծրագրի կատարման ընթացքի վերաբերյալ փաստական տվյալներ է հավաքագրել նախ հանրային հասանելի՝ հրապարակված տեղեկատվությունից օգտվելով, Գործողությունների ծրագրի կատարման աշխատանքները համակարգող աշխատանքային խմբի արձանագրություններից, Գործողությունների ծրագրի կատարման հաշվետվություններից, հաջորդիվ՝ պատկան մարմիններին հարցումներ ուղարկելով և վերջում՝ համապատասխան պաշտոնյաների հետ հարցազրույցների միջոցով:

Փաստական տվյալները համադրվել են Ռազմավարության գործողությունների ծրագրով նախատեսվածի հետ, նաև ժամանակագրական առումով: Այնուհետ, այս գործողություններով նախատեսվածը համադրվել է Կառավարության գործունեության պլանավորման ծրագրերի հետ, ներառյալ ֆինանսական պլանները: Համադրության մանրամասն արդյունքները նեկայացված են այս հաշվետվության Հավելված 1-ում: Գնահատումը դիտարկել է նաև Գործողությունների ծրագրի միջոցառումների, մասնավորապես՝ Պարեկային ծառայության ներդրման հետ կապված ֆինանսական տվյալները: Այնքանով, ինչքանով հնարավոր է եղել հավաքագրել ֆինանսական տվյալները, դրանք մեկտեղվել են և ներկայացված են Հավելված 2-ում: Տվյալները

ամբողջական չեն, քանի որ առկա են գործողությունների ծրագրի կատարման ընթացքի համակարգման և պլանավորման գործընթացների բացեր, որոնց այս հաշվետվությունը անդրադառնում է, և սրա հետևանքով իրականացված (փաստացի) և պլանավորված ծախսերի ամբողջական՝ լիարժեք պատկեր ստանալ չի ստացվել. Հավելված 2-ը ներառում է ֆինանսական տվյալների հիմնական և գերակշիռ մասը:

Գնահատումը չի անդրադարձել գնումների իրականացման գործընթացներին, դիտարկվել են միայն մեկ-երկու գնման գործընթացներ, որոնց մասին այս հաշվետվության մեջ կա ակնարկ:

1. Ամփոփագիր

Ոստիկանության բարեփոխումների ռազմավարության գործողությունների 2020-2022 թթ. ծրագրով նախատեսվել են ծավալուն և համակարգային նշանակալի բարեփոխումներ: Այս բարեփոխումները մասշտաբային են և ծախսատար: 2022 թվականի հոկտեմբեր ամսի դրությամբ միայն ՀՀ պետական բյուջեից այս ռազմավարության գործողությունների ֆինանսավորմանը ուղղվել է ավելի քան 30 միլիարդ դրամ: Հաշվի առնելով, որ այս բարեփոխումներն իրագործելու համար շատ մեծ ծավալի հանրային ռեսուրսներ են օգտագործվում, նաև որ սրանք անմիջապես ազդելու են քաղաքացի և ոստիկան հարաբերությունների որակի վրա, դրա ընթացքի թափանցիկ և հաշվետվողական լինելը ավելի քան կարևոր է: Այս գնահատման նպատակներից է նաև ապահովել այս բարեփոխումների իրականացման ընթացքի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, միևնույն ժամանակ նպաստել դրանց որակով իրականացմանը՝ փորձելով ապահովել ,արժեք՝ փողի դիմացե սկզբունքի իրագործումը հանրային ռեսուրսների օգտագործման մեջ: Այս գնահատումը վեր է հանել հետևյալ հիմնական բացերն ու թերացումները:

Ծրագրով նախատեսված ոչ բոլոր գործողություններն են տեղ գտել Կառավարության գործունեության ծրագրային փաստաթղթերում, այդ թվում՝ միջնաժամկետ ծախսային ծրագրերում (ՄԺԾԾ): Ռազմավարության գործողությունների ծրագրի ֆինանսական գնահատման բացակայության պատճառով, նաև հաջորդիվ, հատկապես Պարեկային ծառայության կառուցվածքի և գործառույթների ոչ պատշաճ և ժամանակավրեպ (գործողությունների ծրագրով նախատեսվածի համեմատ) պլանավորման հետևանքով ֆինանսական պլանները (մասնավորպես՝ ոստիկանության բյուջետային հայտերը) համապարփակ չեն ներկայացվել: Միաժամանակ, չնայած որ Պարեկային ծառայությունը հանդիսանում է պետության կողմից ներդրված նոր ծառայություն և դրա

ֆինանսավորումը միլիարդների է հասնում, սրա համար առանձին ծրագիր ՀՀ պետական բյուջեում չի նախատեսվել: Այս ամենի հետևանքով ռազմավարության գործողությունների ծրագրի իրականացման ու դրա ֆինանսավորման ամբողջական պատկեր ստանալ չի ստացվում: Գործողությունների ծրագրի կատարողականի հաշվետվությունները նույնպես չեն նպաստում այս պատկերի ամբողջացմանը, քանի որ տեղեկատվությունն ու տվյալները համակարգված ձևով չեն ներկայացվում, նաև դրանցում առկա չեն համապարփակ գործառական և ֆինանսական տվյալներ:

Գնահատումը նաև վերհանել է համակարգային էական նշանակության խնդիրներ ոստիկանական ծառայողների մասնագիտական որակների մասով: Պարեկային ծառայողի նախնական մասնագիտական կրթական ծրագրի ընդունելության պահանջներին (բժշկական հետազոտություններ, մասնագիտական պիտանելիության համապատասխանության (IQ թեստ) և ֆիզիկական պատրաստվածության ստուգումներ) չեն բավարարել դիմորդ ոստիկանական համակարգի ծառայողների շուրջ կեսը (կրթական ծրագրի ընդունելության երեք փուլերում միասին վերցրած), սակայն վերադարձել են ոստիկանական համակարգ իրենց ծառայողական պարտականություններին: Այս կրթական ծրագիրը ոստիկանական կրթական համակարգում նախնական մասնագիտական կրթությանն է հավասարս, և դրա ընդունելության պահանջներին բավարար գիտելիք, կարողություն և ունակություն չունենալով հանդերձ, ոստիկանական համակարգում ծառայելը լրջագույն համակարգային խնդիր է, և այս պայմաններում ռազմավարությամբ դրված՝ ,նոր ոստիկանի նկարագիրե ունենալու նպատակը չի կարող իրագործվել:

Այս գնահատումն արձանագրում է նաև Ռազմավարության գործողությունների ծրագրի աշխատանքների համակարգման թերացումները, որոնք կարող են հանգեցնել ռեսուրսների ոչ նպատակային օգտագործման, և կարող են առաջացնել վատնման և/կամ յուրացման ռիսկեր:

Գնահատման մանրամասները ներկայացված են այս հաշվետվությամբ և դրա մաս կազմող հավելվածներում:

2. Հայաստանի Հանրապետության Ոստիկանության բարեփոխումների ռազմավարության գործողությունների 2020-2022 թթ. ծրագրի կառուցվածքը

Հայաստանի Հանրապետության Ոստիկանության բարեփոխումների ռազմավարության գործողությունների 2020-2022 թթ. ծրագիրը (այսուհետ՝ Գործողությունների ծրագիր), որը հաստատվել է ՀՀ կառավարության 23 ապրիլի 2020

թվականի թիվ 638-Լ որոշմամբ[15], բաղկացած է 9 ուղղություններից, որոնք ունեն նկարագրված խնդիր և թիրախ: Այս ուղղությունները ի սկզբանե նպատակադրումներ են, որոնց հասնելու համար որոշված են որոշակի գործողություններ: Այդ ուղղությունները հետևյալն են.

1) նոր ոստիկանության նկարագիր,

2) ոստիկանության կառուցվածքային մոդել,

3) պարեկային ոստիկանության ծառայության և Օպերատիվ կառավարման կենտրոնի ներդրում,

4) ոստիկանության զորքերի ապառազմականացում, հասարակական կարգի պահպանություն,

5) քրեական ոստիկանության զարգացում,

6) համայնքային ոստիկանության վերահիմաստավորում,

7) ոստիկանության ռեֆորմի իրականացման ընթացք և միջազգային համագործակցություն,

8) բարեփոխումների իրականացման ներառականություն, գործողությունների մշտադիտարկում և համակարգում,

9) ռազմավարական հաղորդակցություն:

Այս ուղղությունները, ինչպես արդեն նշվեց, **նպատակադրումներ են, որոնք պետք է ունենան արդյունքային ցուցիչներ և թիրախներ: Սակայն դրանցից միայն երկուսն (1 և 7 ուղղությունները) ունեն արդյունքային ցուցիչ և թիրախ:**

Այս բոլոր ուղղությունների համար, միասին վերցրած, նախատեսված է 41 գործողություն: Այդ գործողություններից շատերը նախատեսում են նոր իրավական ակտերի ընդունում և/կամ առկա իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ: Սակայն **Գործողությունների ծրագրին կից նախատեսվող իրավական ակտերի պլան բերված չէ:** Որպես կանոն նման պլաններն ունենում են իրավական ակտերի ցանկի տեսք՝ ժամանակացույցով և պատասխանատու մարմիններով, ինչը դառնում է գործողությունների ծրագրի մաս և հնարավորություն է տալիս գործադիր և օրենսդիր մարմինների աշխատանքային ծրագրերում (կառավարության ծրագրեր, օրենսդիր մարմնի օրենսդրական ակտերի ծրագրեր և այլն) դրանց ներառումը, պատշաճ կարգով և ժամանակին դրանց նախագծերի պատրաստումն ու ընդունումը:

[15] Որոշման հղում՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=153121

Գործողությունների ծրագրի յուրաքանչյուր գործողության համար նախատեսված են ,Թիրախ ըստ ժամկետիե (2020-2022թթ. ժամանակահատվածի համար), ,Համակատարողե, ,Արդյունք / Վերստուգիչ ցուցանիշե և ,Ֆինանսավորման աղբյուր ըստ ռազմավարությանե դաշտեր:

Արդյունք (Վերստուգիչ ցուցանիշ) դաշտում ներկայացված ցուցանիշները վերաբերում են գործողություններին, այլ ոչ այն նպատակադրումներին, որոնց հասնելու համար իրականացվում են այդ գործողությունները: Հետևաբար՝ դրանք որևէ կերպ չեն ցուցանում, թե արդյոք դրված նպատակադրումը իրագործվում է, և ինչ չափով: Օրինակ՝ Գործողությունների ծրագրի առաջին ուղղությամբ (Նոր ոստիկանության նկարագիր) նախատեսված են վեց գործողություններ, որոնցով նախատեսված ցուցանիշները չեն չափում, թե ,Ոստիկանության ծառայության հանդեպ վստահության բարձրացումե դրված թիրախը որոշված գործողությունները կատարելու արդյունքում ինչ չափով է իրագործվում:

Գործողությունների ծրագիրը չունի ֆինանսական գնահատում, ինչը հանգեցնում է մի շարք խնդիրների, որոնք ներկայացվում են 2.1 բաժնում **և հաջորդիվ:**

Գործողությունների ծրագրով նախատեսված գործողությունների շուրջ կեսը այս գնահատման դրությամբ չի իրականացվել (մանրամասները ներկայացված են այս գնահատման հաշվետվության մաս կազմող Հավելված 1-ում:)**:** Վերջիններիս զգալի մասի գծով աշխատանքներ ընդհանրապես կատարված չեն, իսկ մնացյալը գտնվում է նախագծային (եթե իրավական ակտի ընդունում էր նախատեսված) փուլում կամ որոշակի քայլեր են իրականացվել, որոնք կամ դադարել են, և/կամ նախատեսված գործողության ամբողջական կատարման չեն հանգեցրել: **Պլանավորված գործողությունների հաջորդ կեսի գերակշիռ մասը իրականացվել է նախատեսված ժամկետներից զգալի շեղումներով:** Նման զգալի ժամկետային խախտումները կարող են ունենալ, ինչպես օբյեկտիվ (օրինակ՝ համավարակ և պատերազմ), այնպես էլ սուբյեկտիվ պատճառներ (օրինակ՝ թերի ֆինանսական պլանավորում, ինչը նաև բխում է գործողությունների ծրագրի ոչ արդյունավետ համակարգումից): Թե ո՞ր պատճառներն են նշանակալի դեր կատարել Գործողությունների ծրագրի մեծ մասի չկատարման, թերակատարման և/կամ պլանավորված ժամկետներից զգալի շեղումներով կատարման մեջ, այս գնահատման արդյունքում հնարավոր չի եղել պարզել:

Գործողությունների ծրագրով նախատեսված որոշ գործողությունների համար հաջորդիվ ընդունված Կառավարության ծրագրով և Կառավարության գործունեության

միջոցառումների ծրագրով նախատեսվել են իրականացման այլ՝ ավելի ուշ ժամկետներ: Սրանցից էականները ներկայացված են այս գնահատման հաջորդ բաժնում:

3. Ռազմավարության գործողությունների ներառվածությունը Կառավարության ծրագրերում և ֆինանսական պլաններում (ՄԺԾԾ-ներ և տարեկան բյուջեներ):

Ռազմավարությունը և դրա գործողությունների ծրագիրը ընդունվել են ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 23 -ի N 638-Լ որոշմամբ:

,Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թթ ծրագիրը (այսուհետ՝ Կառավարության ծրագիր) ընդունվել է 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ:[16] Կառավարության ծրագրի 5.4 բաժինը անդրադառնում է Ոստիկանության բարեփոխումներին և ներկայացնում է Ռազմավարությամբ նախատեսված բարեփոխումների հիմնական ուղղությունները:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 1902-Լ որոշմամբ ընդունվել է ,Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը (այսուհետ՝ Կառավարության միջոցառումների ծրագիր): Կառավարության միջոցառումների ծրագիրը Ոստիկանության համար սահմանել է ութ նպատակ, որոնցից չորսը առնչվում են Գործողությունների ծրագրով նախատեսված նպատակներին (նշված են որպես ուղղություններ): Դրանք են 1) Ներքին գործերի նախարարության ձևավորումը, 2) Ոստիկանության զորքերի կարգավիճակի վերանայումը, 3) Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում Ոստիկանության պարեկային ծառայության և օպերատիվ կառավարման կենտրոնի ստորաբաժանումների ստեղծումը, և 4) Ոստիկանության ծառայողների վարձատրության և սոցիալական երաշխիքների բարելավումը:

Գործողությունների ծրագրի երկրորդ ուղղությամբ նախատեսվել է Ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ ՆԳՆ) ձևավորում, որը, ըստ ժամանակացույցի, պետք է գործարկված լիներ՝ ապահովված լիներ տարածքով, իսկ աշխատակազմի 70%-ը՝ համալրված, **մինչև 2021 թվականի երկրորդ կիսամյակ**: **Կառավարության միջոցառումների ծրագրի** Ոստիկանություն բաժնի 1.3 կետով ՆԳՆ ձևավորմանն ուղղված օրենքների նախագծերի փաթեթի ընդունումից հետո դրանից բխող անհրաժեշտ ենթաօրենսդրական և գերատեսչական ակտերի ընդունումը նախատեսված է **մինչև 2023 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ**: Ուստի՝

[16] Որոշման հղումը՝ https://www.gov.am/files/docs/4586.pdf

նախատեսվել է, որ ՆԳՆ ստեղծման օրենսդրական փաթեթը պետք է ընդունվի ԱԺ կողմից մինչև նշված ժամկետը: **Գնահատման պահի դրությամբ համապատասխան օրենսդրական փաթեթը ԱԺ ուղարկված չի եղել:**

Գործողությունների ծրագրի 3-րդ ուղղությամբ 2022 թվականի առաջին կիսամյակը սահմանվել է վերջնաժամկետ Հայաստանի Հանրապետության **ամբողջ տարածքում Պարեկային ծառայության ներդրման համար:** Սակայն **Կառավարության ծրագրի 5.4 բաժնում Հանրապետությունում ամբողջական ներդրման վերջնաժամկետը 2023 թվականի ավարտն է:** Իսկ **Կառավարության միջոցառումների ծրագրում այդ վերջնաժամկետը 2024 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակն է**: Այս գնահատման դրությամբ[17] պարեկային ծառայությունը ներդրված է Երևանում (մեկնարկը 2021 թվականի հուլիսի 7-ին), Լոռի և Շիրակ մարզերում (մեկնարկը 2022թ. ապրիլի 16-ին): Մանրամասները ներկայացված են այս հաշվետվության ,Պարեկային ծառայության փուլային գործարկումե բաժնում:

Ռազմավարության գործողությունների ծրագրի 4-րդ ուղղությամբ նախատեսված է **Ոստիկանական զորքերի ապառազմականացում (նաև համապատասխան օրենքի ուժը կորցրած ճանաչում և մինչև 2022 թվականի ավարտ ոստիկանական զորքերի վերափոխում ազգային գվարդիայի՝ առնվազն 30%-ի վերապատրաստման միջոցով), որի ուղղությամբ այս գնահատման պահի դրությամբ որևէ նշանակալի գործողություն չի իրականացվել[18]: Օրենսդրական նախագծերի էլեկտրոնային E-draft համակարգում այս գնահատման պահի դրությամբ նման նախագիծ (ներառյալ՝ համապատասխան օրենքի ուժը կորցրած ճանաչում) տեղադրված չի եղել: Իսկ ՆԳՆ ստեղծման մասին օրենսդրական փաթեթում ներքին զորքերը դիտարկվում են որպես ՆԳՆ մարմին Ոստիկանության մաս, իսկ դրա հրամանատարը՝ Ոստիկանության պետի տեղակալ:**

Ռազմավարության գործողությունների ծրագրի 2022 թվականի առաջին կիսամյակի կատարողական հաշվետվության մեջ նշված է, որ Ոստիկանության զորքերի վերակազմակերպումն առաջնահերթություն է և ,բարեփոխումներով նախատեսվում է

[17]Գնահատումը անդրադառնում է բարեփոխումների ընթացքին 2022 թվականի հոկտեմբեր ամսի դրությամբ՝ ներառելով այն ամբողջ տեղեկատվությունն ու տվյալները, որ հասանելի են եղել կամ հնարավոր է եղել հավաքագրել Ոստիկանության և/կամ այլ պետական կառավարման մարմիններից՝ նաև վերջիններիս հարցումներ ուղարկելու միջոցով:

[18] ՀՀ պետական բյուջեի (օրենքն ընդունվել է 2021 դեկտեմբերի 9-ին) մաս կազմող ՀՀ կառավարության 2022 թվականի բյուջետային ուղերձում անդրադարձ է կատարվել Ոստիկանության բարեփոխումների ռազմավարությանը և Ոստիկանության զորքերի վերակազմավորմանը: Դրանում նշված է, որ Ազգային գվարդիայի կազմակերպման և գործունեության կարգն այլևս չի կարգավորվելու ռազմական օրենսդրական ակտերով: Սակայն Ոստիկանական զորքերի ապառազմականացման մասին արձանագրումներ չկան հաջորդող այլ ծրագրային փաստաթղթերում, որոնց այս գնահատումը անդրադառնում է:

Ոստիկանության զորքերի և պետական պահպանության գլխավոր վարչության հենքի վրա ձևավորել Ազգային գվարդիա՝ որպես Ոստիկանության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում, որի գործունեությունն այլևս չի կանոնակարգվի ռազմական և զինված ուժերի օրենսդրությամբ, և այդ իմաստով այն չի ունենա այլ զորքերի կարգավիճակ, ինչպիսին ներկայումս հանդիսանում է ,Ոստիկանության զորքերը: Սակայն, ինչպես արդեն նշվեց, այս գնահատման պահի դրությամբ, այս ուղղությամբ որևէ գործուն քայլ կատարված չէ:

3.1 ՄԺԾԾ-ներում Գործողությունների ծրագրի գծով ծախսերի պլանավորում

ՀՀ կառավարության 2020 թվականի հուլիսի 10-ի թիվ 1212-Ն որոշմամբ հաստատվել է 2021-2023թթ. միջնաժամկետ ծախսային ծրագիրը (ՄԺԾԾ): Սրա մաս կազմող Հավելված 6-ում ներառված են 2021-2023թթ. ժամանակահատվածում ռազմավարություններից բխող նոր նախաձեռնությունները՝ ըստ բյուջետային գլխավոր կարգադրիչների: Սակայն սրանում Գործողությունների ծրագրով (ինչպես արդեն նշվել է, սա հաստատվել է 2020 թվականի ապրիլի 23-ին) նախատեսված գործողությունների գծով որևէ ծրագիր և/կամ միջոցառում չի նախատեսվել:

ՀՀ կառավարության 12 հուլիսի 2021 թվականի թիվ 1171-Ն որոշմամբ հաստատվել է 2022-2024թթ. ՄԺԾԾ-ն: Սրանում նույնպես Գործողությունների ծրագրի համար գումարներ չեն նախատեսվել (կամ նախատեսվել են այլ ծրագրերի ներքո և չեն երևում): Իսկ 2021 թվականի դեկտեմբերի 9-ին ՀՀ Ազգային Ժողովը ընդունել է ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի մասին օրենքը, և պետական բյուջեի մաս կազմող ՀՀ կառավարության 2022 թվականի բյուջետային ուղերձում անդրադարձ է կատարվել Ոստիկանության բարեփոխումների ռազմավարությանը և Գործողությունների ծրագրով նախատեսված որոշ գործողությունների: 2022-2024թթ. ՄԺԾԾ-ով 2022 թվականի համար Ոստիկանությանը պլանավորվել էր հատկացնել 60.3 միլիարդ դրամ, իսկ 2022 թվականի ՀՀ պետական բյուջեի մասին օրենքով պլանավորվել է հատկացնել 66.6 միլիարդ դրամ: Սակայն պարզ չէ, թե ինչ չափի բյուջե է նախատեսվել Գործողությունների ծրագրով նախատեսված ուղղությունների ֆինանսավորմանը[19], օրինակ՝ Պարեկային ծառայության ներդրմանը: Սա պատճառ է նրա, որ **Գործողությունների ծրագրով նախատեսված նոր ծառայությունների (օրինակ՝ Պարեկային ծառայություն) գծով ծախսերը, ներառվում են ՀՀ Ոստիկանության**

[19] Համաձայն պետական բյուջեի նախագծերի մշակման շրջանակներում պետական մարմինների բյուեետային հայտերի կազմման և դրանք ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացման մեթոդական ցուցումների. «ՀՀ կառավարության կողմից հաստատված ցանկացած ռազմավարություն և ծրագիր պետք է արտացոլվի բյուջեում՝ ապահովելով սերտ կապ ՀՀ կառավարության ռազմավարությունների և պետական բյուջեի միջև»:

բյուջետային հայտի թիվ 1158 ծրագրի ներքո (ծրագրի անվանումն է՝ Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն), ինչը հնարավորություն չի տալիս տեսնելու նոր ծառայությունների ներդրման և դրանց ընթացիկ սպասարկման գծով ծախսերը:

Ծրագրային բյուջետավորման տրամաբանությունը և մեթոդական ցուցումները[20] պահանջում են (2022 թվականի բյուջեի նախագծեր կազմելու ցուցումները ներառում էին նման պահանջներ), որ պետության կողմից մատուցվող նոր ծառայությունները (այն է՝ նոր նախաձեռնությունները) ներկայացվեն անջատ՝ գոյություն ունեցող ծրագրերից: Մասնավորապես՝ մեթոդական ցուցումներում ասվում է. ,Գոյություն ունեցող ծրագրերի/միջոցառումների համար նշված ձևաչափերն օգտագործելիս դրանցում չպետք է ներառվեն նոր նախաձեռնությունների գծով ծախսերը: **Միաժամանակ, ծրագրային բյուջետավորման սկզբունքները պահանջում են, որ նոր նախաձեռնությունները, որոնք զգալի ծավալի բյուջետային ֆինանսավորում են պահանջում[21] և հանրության լայն զանգվածներին մատուցում են նոր ծառայություններ, ներգրավվեն (ֆինանսավորվեն) նոր ծրագրերի և/կամ միջոցառումների ներքո:** Նման մոտեցումը հնարավորութուն է տալիս ապահովելու պետական բյուջեի ծախսերի նկատմամբ հանրային վերահսկողությունը, հնարավորություն է տալիս ապահովելու հարկ վճարողների գումարների ծախսման թափանցիկությունն ու հաշվետվողականությունը և նաև հնարավորություն է տալիս չափելու այդ նոր ծառայությունների որակն ու արդյունավետությունը, մասնավորապես՝ հանրային ռեսուրսների ծախսման մասով արժեք փողի դիմաց սկզբունքին բավարարելու աստիճանը: Հետևաբար՝ **վերոնշյալ մոտեցումներից և սկզբունքներից շեղումները հնարավորություն չեն տալու հանրային պատշաճ վերահսկողություն իրականացնել ոչ միայն պետական բյուջեի միջոցների ծախսման նպատակայնության նկատմամբ, այլ նաև՝ դրանց արդյունավետության և մատուցվող ծառայությունների որակի:**

Այս գնահատումը առավել մանրամասն անդրադառնում է Գործողությունների ծրագրի երրորդ ուղղությանը (նպատակին)՝ Պարեկային ոստիկանության ծառայության և Օպերատիվ կառավարման կենտրոնի ներդրմանը, քանի որ **սա Գործողությունների ծրագրի ամենածախսատար ուղղությունն է, որի իրագործման ուղղությամբ**

[20] Մեթոդական ցուցումների հղում՝ https://minfin.am/website/images/website/documents/copy_1_%D5%84%D5%A5%D5%A9%D5%B8%D5%A4%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%20%D6%81%D5%B8%D6%82%D6%81%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80.rar

[21] Ծրագրային բյուջետավորման ձևաչափով ծրագրերի և միջոցառումների սահմանման Մեթոդական ձեռնարկը պայմանաանորեն կիրառում է 100 մլն դրամ շեմը, որպես ծրագրերի մեծ կամ փոքր դիտարկելու ցուցիչ: Հղում՝ https://minfin.am/website/images/website/iravakan_akter/hramanner/byujetayin/Havelvacner.rar, Հավելված 1:

գնահատման պահի դրությամբ վեր հանված տեղեկատվության համաձայն ՀՀ պետական բյուջեի միջոցներից ծախսվել և/կամ նախատեսվում[22] է ծախսել ավելի քան 30 միլիարդ դրամ: Միաժամանակ, սա այն ուղղություն է, որին հասցեագրված է օտարերկրյա և միջազգային գործընկերների հիմնական աջակցությունը: Օրինակ՝ **ԱՄՆ դեսպանատունն իր համապատասխան կառույցների միջոցով Պարեկային ծառայության ներդրման համար գնահատման պահի դրությամբ ավելի քան 10 միլիոն ԱՄՆ դոլարի նյութական և տեխնիկական (պարեկային ծառայության գիտելիք) աջակցություն է տրամադրել ՀՀ Ոստիկանությանը**:

4. Ռազմավարության գործողությունների ծրագրի երրորդ ուղղություն. Պարեկային ոստիկանության ծառայության և Օպերատիվ կառավարման կենտրոնի ներդնում:

4.1. Պարեկային ծառայողների կրթություն

Այս ուղղության (նպատակի) չորրորդ գործողությունը՝ Պարեկային ծառայողների կրթության իրականացումը նախատեսում էր, որ հետևյալ թվով պարեկային ծառայողներ պետք է պատրաստվեն նշված ժամկետներում.

- 600 ծառայող՝ 2021 թ. 1-ին կիսամյակ:
- 1200 ծառայող՝ 2022 թ. 1-ին կիսամյակ:
- 1500 ծառայող՝ 2022 թ. 2-րդ կիսամյակ:

Վերոնշյալի վերաբերյալ ՀՀ Ոստիկանությանը ուղղված հարցումներով տրամադրվել են հետևյալ տվյալները՝ համապատասխան աղյուսակների տեսքով[23]:

Աղյուսակ 1

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 1032.01.4 ,Ոստիկանական գործե մասնագիտության 1032.01.02.4 ,Պարեկե որակավորման պետական կրթական ծրագրի վերաբերյալ

(Ծրագիրը հաստատվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 19 հունիսի 2020 թ.-ի N 14-Ն հրամանով:)

[22] Կան կնքված պայմանագրեր, որոնցով ապրանքների, ծառայությունների մատուցումը և/կամ կատարվող շինարարական աշխատանքները դեռ ընթացքի մեջ են:
[23] Աղյուսակները կազմել է սույն հաշվետվության հեղինակ Հովհաննես Ավետիսյանը, իսկ տվյալները լրացրել են ՀՀ Ոստիկանության աշխատակիցները:

Ժամանակահատված	Ծրագրին դիմորդների թիվը, այդ թվում				Ծրագրի ընդունելության պահանջները հաղթահարած դիմորդների թիվը (ծրագիր ընդունված, ըստ հատկացված տեղերի), այդ թվում				Ծրագիրն ավարտած և հավաստագիր ստացածների թիվը, այդ թվում՝				Ծրագիրն ավարտածներից պարեկային ծառայության անցածների թիվը, այդ թվում			
	Ոստիկանության ծառայող, այդ թվում՝Ս		Քաղաքացիական, այդ թվում՝		Ոստիկանության ծառայող, այդ թվում՝		Քաղաքացիական, այդ թվում՝		Ոստիկանության ծառայող, այդ թվում՝		Քաղաքացիական, այդ թվում՝		Ոստիկանության ծառայող, այդ թվում՝		Քաղաքացիական, այդ թվում՝	
	Տղամարդ	Կին	Տղամարդ	Կին	Տղամարդ	Կին	Տղամարդ	Կին	Տղամարդ	Կին	Տղամարդ	Կին	Տղամարդ	Կին	Տղամարդ	Կին
(Ընդունելություն՝ 07.09.20-27.11.20թ.	620	10	857	79	269	5	455	41	231	3	422	41	231	3	422	41
(Ընդունելություն՝ 22.09.21-22.10.21թ.	611	20	446	32	331	17	222	20	286	14	181	8	283*	14	181	8
(Ընդունելություն՝ 06.06.22-15.07.22թ.	569	8	550	20	319	4	307	15	-	-	-	-				

* Երեք ծառայող հրաժարվել է պաշտոնի նշանակվելուց:

Աղյուսակ 1-ում ներկայացված տվյալներից պարզ է դառնում, որ Պարեկային ծառայության կրթական ծրագրի առաջին փուլին (2020-21 ուսումնական տարի) դիմել է 1566 հոգի, որոնցից 630-ը՝ Ոստիկանության ծառայողներ, իսկ 936-ը՝ քաղաքացիական:

Ոստիկանության ծառայող դիմորդներից միայն 1.6 %-ն են եղել կանայք, իսկ քաղաքացիականների՝ 9.2%-ը: 1566 դիմորդներից ծրագրի ընդունելության պահանջները հաղթահարել են և Պարեկային ծառայողի կրթական ծրագրում ներգրավվել է 770 հոգի, որոնցից միայն 274 հոգին է Ոստիկանության ծառայող, իսկ մնացյալ 496-ը եղել են քաղաքացիական անձինք: Ստացվում է, որ **կրթական ծրագրին դիմորդ 630 ոստիկաններից միայն 274-ն են հաղթահարել ծրագրի ընդունելության պահանջները և ընդունվել (43.5%): Այսինքն՝ ընդունելության պահանջները չի հաղթահարել և կրթական ծրագիր չի ընդունվել դիմորդ ոստիկանների 56.5%-ը:**

Առաջին փուլում Պարեկային ծառայության կրթական ծրագիր ընդունված 770 հոգուց ավարտել են 697-ը, որից 234-ը եղել են ոստիկան, իսկ 463-ը՝ քաղաքացիական: **Ստացվում է, որ ծրագիր ընդունված 274 ստիկաններից 40-ը չեն ավարտել (14.6%), իսկ 496 քաղաքացիականից՝ 33-ը (6.7%):**

Հաջորդ փուլում (2021-2022 ուսումնական տարի, 1-ին հոսք) պարեկային ծառայության կրթական ծրագրին դիմել է 1109 հոգի, որից 631-ը՝ ոստիկան, իսկ 478-ը՝ քաղաքացիական: Դիմորդներից ծրագրի ընդունելության պահանջները հաղթահարել և ընդունվել է 590 հոգի, որից 348-ը՝ ոստիկան, իսկ 242-ը՝ քաղաքացիական: **Դիմորդ 631 ոստիկաններից ընդունվել են միայն 348 (55.2%)-ը, այսինքն՝ ընդունելության պահանջները (բժշկական հետազոտություններ, մասնագիտական պիտանելիության համապատասխանության (IQ թեստ) և ֆիզիկական պատրաստվածության ստուգումներ) չի հաղթահարել դիմորդ ոստիկանների 44.8%-ը:** Դիմորդ 478 քաղաքացիականներից ընդունվել է 242 հոգի, այսինքն՝ դիմորդ քաղաքացիական անձանց 50.6%-ը:

Երկրորդ փուլում Պարեկային ծառայության կրթական ծրագիր ընդունված 590 հոգուց ավարտել են 489-ը, որից 300-ը՝ ոստիական, իսկ 189-ը՝ քաղաքացիական: **Ստացվում է, որ ծրագիր ընդունված 348 ստիկաններից 48-ը չեն ավարտել (13.8%), իսկ 242 քաղաքացիականից՝ 53-ը (21.9%):**

Երրորդ փուլում (2021-2022 ուսումնական տարի, 2-րդ հոսք. Ուսուցման գործընթացը այս գնահատման դրությամբ դեռ ավարտված չէ) պարեկային ծառայության կրթական ծրագրին դիմել է 1147 հոգի, որից 577-ը՝ ոստիկան, իսկ 570-ը՝ քաղաքացիական: Դիմորդներից ծրագրի ընդունելության պահանջները հաղթահարել և ընդունվել է 645 հոգի, որից 323-ը՝ ոստիկան, իսկ 322-ը՝ քաղաքացիական: **Դիմորդ 577 ոստիկանից ընդունվել են միայն 323 (56%)-ը, այսինքն՝ ընդունելության պահանջները (բժշկական հետազոտություններ, մասնագիտական պիտանելիության**

համապատասխանության (IQ թեստ) և ֆիզիկական պատրաստվածության ստուգումներ) չի հաղթահարել դիմորդ ոստիկանների 44%-ը: Դիմորդ 570 քաղաքացիականներից ընդունվել է 322 հոգի, այսինքն՝ դիմորդ քաղաքացիական անձանց 56.5%-ը:

Հարկ է նշել, որ այս գնահատման հարցազրույցների փուլում (համապատասխան պաշտոնյաների հետ) պարզ է դարձել, որ այն ոստիկանները, որոնք չեն հաղթահարել Պարեկային ծառայողի կրթական ծրագրի ընդունելության պահանջները (երեք փուլերը միասին վերցրած՝ միջինում դիմորդ ոստիկանների կեսը), վերադարձել են իրենց նախկին ծառայողական պարտականություններին: Ընդունելության պահանջները ներառում են բժշկական հետազոտությունները, մասնագիտական պիտանելիության համապատասխանության (IQ թեստ) և ֆիզիկական պատրաստվածության ստուգումները:

Մեր գնահատմամբ ընդունելության պահանջներին համապատասխան բավարար գիտելիք, կարողություն և ունակություն չունենալով հանդերձ ոստիկանության ծառայողների՝ իրենց ծառայությանը վերադառնալու հանգամանքը լրջագույն համակարգային խնդիր է:

Հաջորդ աղյուսակը ցույց է տալիս, թե ըստ մարզերի քանի պարեկային ծառայողի հաստիք էր նախատեսվել, և քանիսն է համալրվել: Տվյալները ներկայացված են այս գնահատման դրությամբ:

Աղյուսակ 2

Պարեկային ծառայողների պլանային և փաստացի ցուցանիշներ, ըստ մարզերի և ք. Երևան							
Ժամանակահատված	2021			2022			2023
Մարզ	Պլանային	Փաստացի, այդ թվում՝		Պլանային	Փաստացի, այդ թվում՝		Պլանային
		Տղամարդ	Կին		Տղամարդ	Կին	
Ք. Երևան	770	653	44	75	52	11	
Լոռի				258	202	5	
Շիրակ				257	209	7	
Տավուշ				136	Գտնվում են ուսումնառության		
Արագածոտն				135			

Գեղարքունիք				158	փուլում		
Կոտայք				197			
Արմավիր							
Արարատ							
Վայոց Ձոր							
Սյունիք							

Սույն գնահատման պահի դրությամբ Պարեկային ծառայության նախնական մասնագիտական կրթական ծրագրի երեք փուլերին միասին վերցրած դիմել է 3822 հոգի, որից 1838-ը՝ ոստիկան, իսկ 1984-ը՝ քաղաքացիական, կրթական ծրագրին ներգրավվել է 2005 հոգի, որից 945-ը ոստիկան, իսկ 1060-ը՝ քաղաքացիական: Համաձայն ՀՀ Ոստիկանության տրամադրած տեղեկատվության՝ **Պարեկ որակավորմամբ կրթական պրոցեսն ապահովելու և կրթական ծրագիրը մատուցելու համար միջինը, առանց կրթաթոշակի, մեկ ուսանողի հաշվով ծախսվում է 1,002,414 դրամ: Ստացվում է, որ 2005 ուսանողի համար այս գնահատման պահի դրությամբ ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 2 միլիարդ դրամից ավել գումար:**

ՀՀ Ոստիկանության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ **Ոստիկանության կրթահամալիրի լսարանների շինարարության և դրանք տեխնիկայով կահավորելու վրա ծախսվել է 47,148,545 դրամ:**

4.2. Պարեկային ծառայության փուլային գործարկում

Ռազմավարության գործողությունների ծրագրի երրորդ ուղղության (նպատակի) հինգերորդ գործողությունը նախատեսում է Պարեկային ծառայության փուլային գործարկում հետևյալ ժամանակացույցով.

- Քաղաք Երևանում՝ 2021 թ. 1-ին կիսամյակ:
- Լոռի և Շիրակ մարզերում՝ 2021 թ. 2-րդ կիսամյակ:
- Ամբողջ հանրապետություն – 2022 թ. 1-ին կիսամյակ:

Այս գնահատման դրությամբ[24] (2022 թ. հոկտեմբեր) պարեկային ծառայությունը ներդրված է եղել միայն Երևանում (մեկնարկը՝ 2021 թվականի հուլիսի 7-ին), Լոռի և Շիրակ մարզերում (մեկնարկը՝ 2022թ. ապրիլի 16-ին):

Ինչպես արդեն նշվել է, Կառավարության ծրագրի 5.4 բաժնում Հանրապետությունում պարեկային ծառայության ամբողջական ներդրման վերջնաժամկետ է սահմանվել 2023 թվականի ավարտը, իսկ Կառավարության միջոցառումների ծրագրում այդ վերջնաժամկետը 2024 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակն է:

Համաձայն Գործողությունների ծրագրի՝ այս գործողությունն իր մեջ ներառում է երկու բաժիններ՝ Պարեկային ծառայության նյութատեխնիկական հագեցվածության ապահովում և Պարեկային ծառայության շենքային պայմանների ապահովում:

Պարեկային ծառայության նյութատեխնիկական ապահովումը հիմնականում տեղի է ունենում ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին: **Այս գնահատման դրությամբ ՀՀ պետական բյուջեից Պարեկային ծառայության նյութատեխնիկական հագեցվածության և շենքային պայմանների ապահովման գծով տրամադրվել է ավելի քան 30 միլիարդ դրամ:** Այս գումարի ծախսման հիմնական ուղղությունները ներկայացված են սույն հաշվետվության Հավելված 2-ում: **Գործողությունների ծրագրով նախատեսված Պարեկային ծառայության ներդրման միջոցառումների գծով առկա են ծախսերի պլանավորման խնդիրներ, որոնց վերաբերյալ տեղեկատվություն ներկայացված է** հաշվետվության 2.1 բաժնում**:**

Ոչ պատշաճ պլանավորման հետևանքով միայն 2022 թվականի ընթացքում **ՀՀ Ոստիկանությանը, ի լրումն իր տարեկան բյուջեով նախատեսված ծախսերի, ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից և/կամ ՀՀ պետական բյուջեում վերաբաշխում անելու եղանակով առնվազն երկու առանձին որոշումներով (որոշումներ՝ թիվ 337 – Ն[25], 17.03.22թ և թիվ N 1567-Ն[26], 06.10.22թ) տրամադրվել է ընդհանուր առմամբ շուրջ 6 միլիարդ դրամ, որի գերակշիռ մասը նախատեսված է Պարեկային ծառայության ֆինանսավորման համար**:

Պարեկային ծառայության համակարգի կառուցվածքի, ձևաչափի և գործառույթների ծավալների ոչ ճշգրիտ և/կամ ոչ ժամանակին պլանավորումը հանգեցնում է դրանց գծով ծախսերի պլանավորման մասնատվածության և դրանց ոչ ամբողջական

[24] Գնահատումը անդրադառնում է բարեփոխումների ընթացքին 2022 թվականի հոկտեմբեր ամսի դրությամբ՝ ներառելով այն ամբողջ տեղեկատվությունն ու տվյալները, որ հասանելի են եղել կամ հնարավոր է եղել հավաքագրել Ոստիկանության և/կամ այլ պետական կառավարման մարմիններից՝ նաև վերջիններիս հարցումներ ուղարկելու միջոցով:

[25] Որոշման համապատասխան հավելվածի հղում՝ https://www.arlis.am/Annexes/6/2022_N337hav.5.pdf

[26] Որոշման համապատասխան հավելվածի հղում՝ https://www.arlis.am/Annexes/6/2022_N1567hav.11.pdf

ներառվածության՝ ՀՀ Ոստիկանության տարեկան բյուջեի ծրագրերում: Սրանով պայմանավորված նաև խնդիրներ են ծագում գնումների կազմակերպման գործընթացներում. մասնավորապես՝ քիչ չեն դեպքերը, երբ խոշոր գնումների պարագայում կիրառում են ՀՀ գնումների մասին օրենքի Հոդված 15-ի 6-րդ կետով նախատեսված դրույթը: Այն է.

,Մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն՝ կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Սակայն նույնիսկ այս դրույթի կիրառման պարագայում առկա է դեպք, երբ խախտվում է օրենքի այս կետով նախատեսված վեց ամսվա պահանջը, կրկին վատ պլանավորման հետևանքով: Մասնավորապես՝ 2022 թ. մարտի 15-ին Ալիկանտե ՍՊԸ հետ կնքվում է պայմանագիր (պայմանագրի ծածկագիր՝ ՀՀ Ո ՀՄԱՊՁԲ-47-ՄՈԲԱՅԼ/2021/ՊԾ) 450 պարեկային ավտոմոբիլներում mobile համակարգերի տեղադրման մասին, որի ընդհանուր աժեքը կազմում է 755,940,000 դրամ: Մարտի 24-ին կնքվում է համաձայնագիր այս նշված գումարից 251,979,999 դրամը հաստատելու մասին, որով mobile համակարգը պետք է տեղադրվեր միայն 150 մեքենաներում: Սույն թվականի հոկտեմբերի 6-ին ՀՀ կառավարությունը կայացնում է որոշում[27]՝ երկարաձգելու պայմանագրի գործողության ժամկետը մինչև 2022 թվականի դեկտմեբրի 20-ը: Այնինչ, **2022 թվականի սեպտեմբերի 15-ին արդեն լրացել էր պայմանագրի կնքման պահից հաշվարկվող վեցամսյա ժամկետը (և պայմանագրի ամբողջական կատարման համար մինչ այս օրը գումարներ չէին նախատեսվել), ուստի՝ պայմանագիրը ենթակա էր լուծման և հարկավոր էր նոր մրցույթ հայտարարել:**

[27] Որոշման հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=169287

Հաշվի առնելով նաև այս որոշմանը կից բերված հիմնավորումների էությունը, սա կարելի է համարել օրենքի պահանջի խախտումով ընդունված որոշում:

Պարեկային ծառայության նյութատեխնիկական ապահովման ուղղությամբ նշանակալի աջակցություն է ցուցաբերում նաև ԱՄՆ կառավարությունը, որը ՀՀ ոստիկանությանը տրամադրել է, ընդհանուր առմամբ, ավելի քան 10 միլիոն ԱՄՆ դոլարի աջակցություն. մասնավորապես՝ տրամադրել են պարեկային ծառայողի ուսումնական և ծառայողական համազգեստներ, սարքեր և սարքավորումներ, համակարգչային տեխնիկա, ալեհավաքներ, հաղորդակցության սարքավորումներ և այլն: Տրամադրված աջակցության վերաբերյալ որոշ մանրամասներ ներկայացված են Հավելված 4-ում:

Առկա տեղեկատվության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դոնոր կազմակերպությունների և այլ պետությունների տրամադրած աջակցության պատշաճ համակարգման խնդիրներ կան, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տրամադրվող ռեսուրսների անարդյունավետ օգտագործման և/կամ տրամադրված աջակցության փոշիացման: Օրինակ՝ 2022 թվականի սկզբին ՀՀ Ոստիկանությունը նախաձեռնել է էլեկտրոնային աճուրդ ռադիոցանցի ձեռքբերման նպատակով (գնման ընթացակարգի ծածկագիր՝ ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-37-ՌԱԴԻՈՑԱՆՑ/2022/ԿՏՏՎ), որին մասնակցել է մեկ ընկերություն՝ Տոպազ-95 ՍՊԸ և ճանաչվել է հաղթող: Պայմանագրի գումարը կազմել է 613,780,200 դրամ, որը ներառում է ռադիոցանցի համակարգի ներդրման աշխատանքներ Hytera DMR մոդելի ներքո: Այս ընկերությունը չինական Hytera Communications ընկերության բացառիկ դիստրիբյուտորն է Հայաստանում: Հաջորդիվ ամերիկյան կողմը ՀՀ Ոստիկանությանը տրամադրել է Motorola մոդելի հաղորդակցության սարքավորումներ, որոնք համադրելի չեն այս համակարգի հետ:

Ամերիկյան կողմի տրամադրած նյութական աջակցությունը՝ սարքավորումներ, ներառում է նաև հարյուրավոր պլանշետներ, որոնցից շուրջ կեսը հաջորդիվ դարձել են անսարք, որի պատճառներից է դիտարկվում նաև դրանց ոչ պատշաճ օգտագործումն ու սպասարկումը: Սա նույնպես կարող է լինել պարեկային ծառայության աշխատանքների համակարգման բացերի հետևանք:

Գործողությունների ծրագրի որոշ միջոցառումների իրականացմանը աջակցություն են ցուցաբերում նաև ԵՄ հայաստանյան գրասենյակը, ՄԱԶԾ-ն ու ԵԱՀԿ-ն: Աջակցությունը հիմնականում կրում է տեխնիկական բնույթ և մասնավորապես ներառում է կրթական չափորոշիչների և մոդուլների, կրթական ծրագրերի վերանայման ուղղությամբ աշխատանքներին օժանդակությունը:

4.3. Օպերատիվ կառավարման կենտրոնի ներդնում

Տվյալ գործողության նպատակն Երևանում և մարզերում ստեղծել Օպերատիվ կառավարման կենտրոններ, որոնք ընդունում են քաղաքացիներից ահազանգերը և րոպեների ընթացքում տալիս անհրաժեշտ հրատապ խորհրդատվություն: Նման կենտրոն բացվել է Երևան քաղաքում, իսկ սրա ստորաբաժանումները Լոռու և Շիրակի մարզերում գործարկվեցին տեղում Պարեկային ծառայության ստորաբաժանումների ներդրմանը զուգահեռ՝ 2022 թվականի ապրիլի 16-ին: Ըստ ոստիկանության տրամադրած հաշվետվության՝ նշյալ ստորաբաժանումները լիարժեք իրականացնում են իրենց վերապահված գործառույթները:[28] Հաջորդիվ Օպերատիվ կառավարման կենտրոններ պետք է ձևավորվեն Կոտայքի, Գեղարքունիքի, Տավուշի և Արագածոտնի մարզերում, որոնց ծրագրային ապահովման աշխատանքներն այժմ իրականացվում են: Առանձին օրենսդրական և պրակտիկ քայլեր են ձեռնարկվել նաև ապահովելու համար Ոստիկանության օպերատիվ կենտրոնի աշխատանքի ներդաշնակեցումը ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Ճգնաժամային կառավարման կենտրոնի և շտապ օգնության հետ:

Ոստիկանությունը նաև հայտնում է Օպերատիվ կառավարման կենտրոնի կադրերի ընտրության ուղղությամբ քայլեր ձեռնարկելու մասին, այդ թվում՝ Ոստիկանության գործող ծառայողների շրջանակից, և նրանց վերապատրաստման ուղղությամբ: Ոստիկանության 18 ծառայողներ անցել են վերապատրաստման դասընթացներ Ոստիկանության կրթահամալիրում Օպերատիվ կառավարման կենտրոնում պաշտոնի նշանակվելու համար: Իսկ Կոտայքի, Գեղարքունիքի, Տավուշի և Արագածոտնի մարզերի Օպերատիվ կառավարման կենտրոնի ստորաբաժանումները համալրող ծառայողները Ոստիկանության կրթահամալիրում համապատասխան ուսումնական ծրագրերով անցել են վերապատրաստումներ՝ 07.12.2022թ- 28.12.2022թ.:

[28] ՀՀ ոստիկանության բարեփոխումների ռազմավարությամբ և դրանից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրով 2022 թվականի ընթացքում իրականացված աշխատանքների վերաբերյալ; https://police.am/%D5%B6%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/reforms.html

5. Ոստիկանության բարեփոխումների համակարգող խորհուրդը և գործողությունների ծրագրի վերաբերյալ տարեկան հաշվետվությունները

ՀՀ վարչապետի 2020 թվականի օգոստոսի 6-ի թիվ 903-Ա որոշմամբ[29] հաստատվել է Ոստիկանության բարեփոխումների համակարգող խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ), Խորհրդի անհատական կազմը և աշխատակարգը, նաև Խորհրդի անհատական կազմում ներգրավվող հասարակական կազմակերպությունների մրցույթի կարգը: Խորհրդի աշխատակարգով նախատեսվում է կիսամյակային և տարեկան հաշվետվությունների հրապարակում Ռազմավարության գործողությունների 2020-2022 թթ. ծրագրի կատարման ընթացքի վերաբերյալ:

Այդ հաշվետվությունները հրապարակվել են ՀՀ Ոստիկանության կայքում (որպես Խորհրդի քարտուղարություն):[30]

Այս գնահատումը ուսումնասիրել է նաև հրապարակված հաշվետվությունները: **Դրանք չեն ներկայացվում կանոնակարգված ձևով, այսինքն՝ որևէ հաստատուն ձևաչափով: Գործողությունների ծրագրի որոշ միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը տարբեր հաշվետվություններում ներկայացվում է կցկտուր և հնարավոր չի լինում ստանալ դրանց կատարման ընթացքի վերաբերյալ ամբողջական պատկերը: Այս հաշվետվությունները ամբողջությամբ չեն արտացոլում Գործողությունների ծրագրի միջոցառումների վրա ծախսված գումարների և դրանց ուղղությունների վերաբերյալ տեղակատվությունը, նաև չեն ներկայացվում պլանայինից փաստացի ծախսերի շեղումների վերաբերյալ տեղեկություններ և հիմնավորումներ:**

Օրինակ՝ Գործողությունների ծրագրի 2021 թվականի տարեկան կատարողականի հաշվետվության մեջ ,5.2. Պարեկային ծառայության շենքային պայմանների ապահովումե գործողության կատարման ընթացքի վերաբերյալ առկա է հետևյալ պատկերը: Երևանի քաղաքի դեպքում նշված է շինարարություն իրականացնող կազմակերպության անվանումը և պայմանագրի գումարի չափը, իսկ Լոռի և Շիրակ մարզերի դեպքում նշվում է, որ մրցույթները կայացել են և առկա է շահող շինարարական կազմակերպությունները, սակայն դրանց անվանումները ու պայմանագրերի գումարները նշված չեն ինչպես 2021 թ. տարեկան, այնպես էլ 2022 թ. կիսամյակային

[29] Որոշման հղումը՝ https://www.e-gov.am/decrees/item/22473/

[30] Սույն հղումով հրապարակված են եղել կիսամյակային և տարեկան հաշվետվություններ: 05.11.22 դրությամբ վերջին հրապարակված հաշվետվությունը եղել է 2022 թվականի առաջին կիսամյակինը. https://www.police.am/նորություններ/reforms.html

հաշվետվություններում: Ուստի՝ հաշվետվությունները հնարավորություն չեն տալիս համապարփակ տեղեկատվություն ստանալու այս միջոցառման գծով ծախսերի վերաբերյալ:

Մեկ այլ օրինակի պարագայում հետևյալ պատկերն է: ,5.1. Պարեկային ծառայության նյութատեխնիկական հագեցվածության ապահովումե գործողության ֆինանսավորման մասով ամբողջական և լիարժեք տեղեկատվություն չի ներկայացվում: Սա ռազմավարության գործողությունների ծրագրի ամենածախսատար ուղղությունն է. Սակայն ծախսերի ուղղությունների և ծավալների վերաբերյալ համապարփակ տեղեկություններսսս կատարողականի հաշվետվություններում չեն ներկայացվում:

Տարբեր ժամանակահատվածների կատարողական հաշվետվություններում որոշ միջոցառումների կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկությունները բացակայում են: Օրինակ՝ Գործողությունների ծրագրի 2021 թվականի տարեկան կատարողականի հաշվետվության մեջ ,5.5. Հանցագործությունների միասնական հանրային հասանելի տվյալների բազայի ստեղծում, որը կպարունակի դասակարգված տվյալներե գործողության կատարման ընթացքի վերաբերյալ 2021 թվականի հաշվետվությունում առկա է տեղեկատվություն, որից նաև պարզ է դառնում, որ գործողությունը ամբողջապես իրականացված և/կամ ավարտված չէ: Սակայն 2022 թ. կիսամյակային հաշվետվությունը այս գործողության մասով հաշվետու ժամանակահատվածում կատարված որևէ աշխատանքի վերաբերյալ տեղեկություն չի ներկայացնում:

Այսպիսով՝ չնայած որ Գործողությունների ծրագրով իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները (կատարողական հաշվետվություններ) տարողունակ են և լի են տվյալներով, դրանք չեն պարունակում համապարփակ, կանոնակարգված գործառական և ֆինանսական տվյալներ, վերլուծություն, ուստի՝ հանրային միջոցների ծախսման թափանցիկություն և հաշվետվողականություն ապահովելու տեսանկյունից, այս հաշվետվությունների կիրառելիությունը և օգտակարությունը խիստ սահմանափակ է:

6. Առաջարկներ

Ստորև ներկայացվում են միայն համակարգային մոտեցում պահանջող առաջարկները: Արձանագրված խնդիրներ շտկելու և բացերը լրացնելու համար առաջարկվում է հետևյալը:

- Քարտեզագրել ՆԳՆ և պարեկային ծառայության ամբողջ համակարգը՝ իր կառուցվածքով և գործառույթներով հանդերձ:
- Քարտեզագրված գործառական տվյալների հիման վրա իրականացնել ՆԳՆ, ներառյալ՝ պարեկային ծառայության համակարգի, ֆինանսական գնահատում և կազմել ֆինանսական մոդել: Մոդելը պետք է ներառի ինչպես արդեն իրականացված ծախսերը, այնպես էլ պլանավորվողը՝ առնվազն հաջորդ երեք տարիների համար: Սա հնարավորություն կտա նաև կազմելու պատշաճ ծրագրեր՝ ներառելով դրանք ինչպես ՄԺԾԾ-ներում, այնպես էլ տարեկան բյուջեներում:
- Հաշվի առնելով Պարեկային ծառայության նախնական մասնագիտական կրթական ծրագրի ընդունելության պահանջներին չբավարարած ոստիկանական ծառայողների մեծ թիվը, մշակել և իրականացնել ատեստավորման քննություններ՝ ոստիկանական համակարգը ծառայությանը ոչ պիտանի կադրերից մաքրելու նպատակով: Ներդնել համակարգ, որով հաջորդիվ պարեկային կրթական ծրագրին դիմած և չընդունված կամ ծրագիրը չավարտած ոստիկանական ծառայողները կազատվեն ծառայությունից:
- Կազմել և վարել տեղեկատվական համակարգ (սկզբի համար կարող է լինել excel տեսքով), որում կարտացոլվի ինչպես դոնորների տված ամբողջ նյութատեխնիկական աջակցությունը, այնպես էլ պետական բյուջեից կատարված գնումները: Սա հնարավորություն կտա ավելի արդյունավետ կառավարել ռեսուրսները, նաև կառավարել դրանց ոչ նպատակային օգտագործման և վատնման ռիսկերը:
- Գործողությունների ծրագրի կատարողականի հաշվետվությունները ներկայացնել որոշակի հաստատված ձևաչափով, որը նկարագրողական մասից զատ կունենա նաև գործառական և ֆինանսական տվյալներ և որ դրանք ամբողջությամբ ցույց կտան գործողությունների իրականացման ծավալը տվյալ որոշակի ժամանակահատվածի դրությամբ:
- Իրականացնել (ընտրանքային կամ ամբողջությամբ) գնման գործընթացների աուդիտ՝ գնումների օրենսդրության պահանջներին դրանց համապատասխանության ստուգում կատարելու նպատակով:

7. Հավելված 1. Գործողությունների ծրագրով նախատեսված գործողությունների կատարողական

Այս հավելվածը ներկայացված է կից՝ excel փաստաթղթի տեսքով: Այն ներառում է հավաքագրված տվյալներ Գործողությունների ծրագրով նախատեսված գործողությունների կատարման ընթացքի վերաբերյալ:

8. Հավելված 2. Գործողությունների ծրագրով նախատեսված գործողությունների ֆինանսավորում

Այս հավելվածը ներկայացնում է Պարեկային ծառայության ներդրման և գործարկման ուղղությամբ կատարված և/կամ պլանավորվող ծախսերը: Սա ներառում է կատարված և պլանավորվող ծախսերի գերակշիռ մասը, այդ թվում՝ 2023 թվականի պետական բյուջեի համար ՀՀ Ոստիկանության բյուջետային հայտում ներառված պարեկային ծառայության համար նախատեսված միջոցները: Քանի որ Ոստիկանության բարեփոխումների ռազմավարության ֆինանսավորումը, ներառյալ՝ Պարեկային ծառայության ներդրման ֆինանսավորումը, մեկ աղբյուրից չէ, և քանի որ կան համակարգման բացեր (տես այս հաշվետվությունը), ներկայացված փաստաթուղթը կարող է չարտացոլել բոլոր կատարված և պլանավորվող ծախսերը:

9. Հավելված 3. Պարեկային ծառայողների ընդունելության տվյալներ

Այս հավելվածը ներառում է այս հաշվետվության Աղյուսակ 1-ով պարեկային ծառայողների ընդունելության վերաբերյալ տվյալները՝ ներկայացված առավել համակարգված եղանակով, նաև տոկոսային հարաբերակցությամբ:

10. Հավելված 4. Պարեկային ծառայության ներդրմանը ԱՄՆ կառավարության տրամադրած նյութատեխնիկական աջակցություն

Հավելվածը ներկայացված է կից և պարունակում է տվյալներ ԱՄՆ կառավարության կողմից տրամադրած նյութատեխնիկական աջակցության վերաբերյալ:

Նկատառումներ

ՀՀ ոստիկանության բարեփոխումների ռազմավարության գործողությունների ծրագրի կատարման ընթացքի գնահատման արդյունքների վերաբերյալ

1. Ուղղություն 1, գործողություն 2- այս պահին պատրաստվել է պարեկի ուսումնական կրթական նոր չափորոշիչի նախագիծը, որը ուղարկվելու է ՄԿՈՒԶԱԿ՝ փորձաքննության:

2. Ուղղություն 1, գործողություն 2- ՀՀ ԿԳՄՍ նախարարի 27.09.2022 թվականի թիվ 36-Ն հրամանով հաստատվել է «Ոստիկանական գործ» մասնագիտության «Ոստիկանության սպա» որակավորման պետական կրթական չափորոշիչը՝ նոր խմբագրությամբ:

3. Ուղղություն 1, գործողություն 2- «Ոստիկանական գործ» մասնագիտության «Իրավագիտության բակալավր» և «Իրավագիտության մագիստրոս» որակավորումների պետական կրթական չափորոշիչների մշակման անհրաժեշտությունը կքննարկվի ՆԳՆ կրթահամալիրի ձևավորումից հետո: Միևնույն ժամանակ հայտնում ենք, որ ՀՀ ԿԳՄՄՆ նախարարի 30.11.2021 թվականի թիվ 50-Լ հրամանով հաստատվել է <<իրավագիտություն>> որակավորումների ոլորտային շրջանակի բնութագրերը, որի հիման վրա ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի 28.02.2022 թվականի թիվ 90-Ա հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ: Աշխատանքային խմբի աշխատանքների արդյունքում ամբողջովին վերանայվել, <<իրավագիտություն>> որակավորումների ոլորտային շրջանակի բնութագրերին համապատասխանեցվել և հաստատվել են հետևյալ փաստաթղթերը.

- Իրավագիտության մագիստրոսի կրթական ծրագրի մասնագիր (հաստատվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի 26.04.2022 թ. թիվ 4 նիստում),
- Իրավագիտության բակալավրի կրթական ծրագրի մասնագիր (հաստատվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի 13.07.2022 թ. թիվ 7 նիստում),
- ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի ուսումնական պլան (հաստատվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի 26.04.2022 թ. թիվ 4 նիստում),
- Նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթության 1032.01.4 «Ոստիկանական գործ» մասնագիտության 1032.01.02.4 «Պարեկ» որակավորման հիմնական կրթական ծրագրի ուսումնական պլան (հաստատվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի 26.04.2022 թ. թիվ 4 նիստում):

4. Ուղղություն 1, գործողություն 3- այս պահին սիմուլացիոն լսարաններից էլեկտրոնային հրաձգարանի մասով լուծման ընթացքում է տեխնիկական և ծրագրային ապահովման հարցերը:

5. Ուղղություն 3, գործողություն 4- պարեկային ծրագրով ընդունված, ավարտական քննությունները հաղթահարած անձանց վերաբերյալ վիճակագրական տվյալները առկա են ներկայացված փաստաթղթերի փաթեթում (676197_6 (1)):

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

Ն Կ Ա Տ Ա Ռ ՈՒ Մ Ն Ե Ր

ՀՀ Ոստիկանության բարեփոխումների ռազմավարության գործողությունների ծրագրի կատարման ընթացքի գնահատման արդյունքների դիտարկումների վերաբերյալ

Հ/Հ	Դիտարկումներ	Դիտարկումների վերաբերյալ նկատառումներ
1	*Ծրագրով նախատեսված ոչ բոլոր գործողություններն են տեղ գտել Կառավարության գործունեության ծրագրային փաստաթղթերում.*	Ոստիկանության բարեփոխումների ռազմավարությամբ (այսուհետ՝ Ռազմավարություն) նախատեսված հիմնական գործողությունները, այն է՝ Պարեկային ծառայության և Օպերատիվ կառավարման կենտրոնի ձևավորում, Ներքին գործերի նախարարության ստեղծում, Ոստիկանության զորքերի գործունեության վերահմաստավորում (Գվարդիայի ստեղծում), կրթական գործընթացի բարելավմանն ուղղված գործընթացներ և այլն, ըստ էության, ընդգրկվել են ՀՀ կառավարության 2021-2026թթ. միջոցառումների ծրագրում՝ կատարման այլ ժամկետներով, որոշ գործողություններ, օրինակ՝ «Ոստիկանությունում դետեկտիվների ինստիտուտի ներդրում» և այլն, ոչ նպատակահարմար համարվելու հանգամանքով պայմանավորված հասկանալիորեն տեղ չեն գտել նշված ծրագրում, իսկ որոշները, օրինակ՝ «Համայնքային ոստիկանությունում գործունեության վերահմաստավորում» և այդ ուղղությամբ ուսումնասիրություններ նախատեսում ենք իրականացնել Ներքին գործերի նախարարության օրենսդրական փաթեթի ընդունումից հետո՝ Ոստիկանության տարածքային մարմինների գործունեության սկզբունքային վերահմաստավորման համատեքստում /ժամկետները դեռևս հստակ չեն/: Բարեփոխումների իրագործումը դինամիկ գործընթաց է և ռազմավարական փաստաթղթերում ներառված նպատակներն ու դրանց իրականացմանն ուղղված միջոցառումները ժամանակի ընթացքում նոր ի հայտ եկած հանգամանքների բերումով կարող են փոփոխվել, ինչպես նաև լրացվել նոր միջոցառումներով, համապատասխանեցվել այլ ռազմավարական փաստաթղթերին, տվյալ իրադրության պահանջներին ու առկա մարտահրավերներին:
2	*Բարեփոխումների ռազմավարության, գործունեության ծրագրի*	Հարկ է նշել, որ Ռազմավարությունն ի սկզբանե ունեցել է նախնական ամբողջական ֆինանսական գնահատական, առանց որի ՀՀ կառավարության հավանությանն արժանացվել չէր կարող:

	ամբողջական ֆինանսական գնահատման բացակայություն.	Այդուհանդերձ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ռազմավարությամբ նախատեսված որոշ միջոցառումների իրականացման համար ձեռքբերման ենթակա տրանսպորտային և տեխնիկական միջոցների պահանջարկի հստակեցումը, իրականացվելիք վերանորոգումների և շինարարությունների ծավալի որոշումը պահանջում է տևական ուսումնասիրություններ, ուստի, դրանց մի մասի վերաբերյալ ելակետային տվյալների բացակայության պատճառով, Ռազմավարության ընդունման պահին հստակ ֆինանսական գնահատական առկա չէր կարող լինել: Այդ աշխատանքներն իրականացվել են հընթացս: Հարկ է նշել, որ այս ուղղությամբ Ոստիկանությունը ՀՀ արդարադատության նախարարության, միջազգային գործընկերների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ իրականացրել են մեծածավալ աշխատանք՝ արդեն Ռազմավարության ընդունումից հետո:
3	*Պարեկային ծառայության ընդունելությունը չհաղթահարած Ոստիկանության ծառայողների հետագա ծառայությունը շարունակելու նպատակահարմարության վերաբերյալ.*	«Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածով հստակ կարգավորված է ոստիկանության ծառայողների ատեստավորման կարգը և պայմանները: Հոդվածի կարգավորումները չեն սահմանում Պարեկային ծառայության նախնական մասնագիտական կրթական ծրագրի ընդունելության պահանջներին չբավարարած ոստիկանության ծառայողների ատեստավորման պահանջ: Միաժամանակ, ծառայողի համապատասխանեցումը զբաղեցրած պաշտոնին որոշվում է պաշտոնավարման ընթացքում ունեցած օպերատիվ-ծառայողական ցուցանիշների, մասնագիտական և գործնական հմտությունների, ինչպես նաև մարդկային որակների համակցության գնահատմամբ, իսկ Պարեկային ծառայության ընդունելության պահանջներին չբավարարելն ինչպես սուբյեկտիվ, այնպես էլ օբյեկտիվ հանգամանքների արդյունք է, որը միանշանակ չի կարող որոշիչ դեր ունենալ Ոստիկանությունում հետագա պաշտոնավարման համար: Բացի այդ, Պարեկային ծառայություն ընդունվելու համար դիմելը Ոստիկանության ծառայողների համար եղել է իրավունք, ուստի տրամաբանական չէ, որ իրավունքից օգտվելը վերջիններիս համար առաջացնի բացասական հետևանքներ՝ հատկապես այն պարագայում, երբ խրախուսվել է նոր ծառայությունը համալրելու համար հայտերի ներկայացումը նաև Ոստիկանության ծառայողների կողմից: Առաջարկվող մոտեցման կիրառումը կբերի Ոստիկանության կառույցում ցնցումների և դրա կտրուկ կիրառումը ռիսկեր է պարունակում Ոստիկանության բարեփոխումների հետագա ընթացքի պատշաճ իրագործման տեսանկյունից: Հիշյալ խմբերի, ինչպես նաև Ոստիկանության մյուս ծառայողների վերապատրաստումը և ատեստավորումը կիրականացվի փուլային տարբերակով՝ խուսափելու համար վերը նշված անցանկալի հետևանքներից:

4	*Գործողությունների ծրագրին կից նախատեսվող իրավական ակտերի պլանի բացակայության վերաբերյալ.*	Նման պլանի կազմումը և դրանում ընդունման կամ փոփոխության ենթակա բոլոր իրավական ակտերի անվանական նշումը Ռազմավարության ընդունման պահին օբյեկտիվորեն հնարավոր չէր, քանի որ այն նախատեսում է իրավական աուդիտի շրջանակներում տևական աշխատանք: Հարկ է նշել, որ Ոստիկանությունը՝ ՀՀ արդարադատության նախարարության հետ համատեղ, իրականացրել է բարեփոխումների ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացումն ապահովող իրավական ակտերի մշակման մեծածավալ աշխատանքներ և բոլոր անհրաժեշտ ակտերը ընդունվել են ժամանակին ու այս առումով Ռազմավարության իրականացման ընթացքում խնդրահարույց իրավիճակներ չեն առաջացել:

ՀՀ ոստիկանություն

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության շենքային պայմանների ապահովման գործողության կատարման ընթացքի վերաբերյալ առկա պատկերի վերաբերյալ

	Կազմակերպության անվանումը	Պայմանագրի ծածկագիրը	Գնման առարկա	Պայմանագրային գումարը
	Շիրակի մարզ պարեկային ծառայություն			
1	«Շախուլյան Շին» ՍՊԸ	29.12.21թ. ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՇԻՐԱԿ/ՆՈՐՈԳՈՒՄ/2022/Հ-11	ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Ամասիայի բաժնի մասնակի ընթացիկ շին-վերանորոգման աշխատանքներ	7,554,064
2	«Շախուլյան Շին» ՍՊԸ	29.12.21թ.ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՇԻՐԱԿ/ՆՈՐՈԳՈՒՄ/2022/Հ-11	ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Անիի բաժնի մասնակի ընթացիկ շին-վերանորոգման աշխատանքներ	6,869,613
3	«Շախուլյան Շին» ՍՊԸ	29.12.21թ.ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՇԻՐԱԿ/ՆՈՐՈԳՈՒՄ/2022/Հ-11	ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Կումայրիի բաժնի մասնակի ընթացիկ շին-վերանորոգման աշխատանքներ	3,803,040
4	«Յանգ Ինվեստ» ՍՊԸ	08,02,2022ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՇԻՐԱԿ/ՆՈՐՈԳՈՒՄ/2022/Հ-19	ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Արթիկի բաժնի մասնակի ընթացիկ շին-վերանորոգման աշխատանքներ	7,136,112
	Լոռու մարզ պարեկային ծառայություն			
1	«Մենարշին» ՍՊԸ	09.12.2021թ.ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ/2022/Հ-5	ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ ՀՀ ՃՈ 2-րդ սպայական գումարտակի 5-րդ վաշտի վարչական շենքի, ք. Վանաձոր /շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ/	9,513,000
2	«Մենարշին» ՍՊԸ	09.12.2021թ.ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ/2022/Հ-5	ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Սպիտակի բաժնի մասնակի ընթացիկ շին-վերանորոգման աշխատանքներ	3,270,000
3	«Մենարշին» ՍՊԸ	09.12.2021թ.ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ/2022/Հ-5	ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Ստեփանավանի բաժնի մասնակի ընթացիկ շին-վերանորոգման աշխատանքներ	3,330,000
4	«Մենարշին» ՍՊԸ	09.12.2021թ.ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ/2022/Հ-5	ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Թումանյանի բաժնի մասնակի ընթացիկ շին-վերանորոգման աշխատանքներ	6,096,000
5	«Մենարշին» ՍՊԸ	09.12.2021թ.ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ/2022/Հ-5	ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Տաշիրի բաժնի մասնակի ընթացիկ շին-վերանորոգման աշխատանքներ	4,752,000
	Կոտայքի մարզ պարեկային ծառայություն			

1	Մուրադյան «Շին» ՍՊԸ	19.09.2022թ. «ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-58-ԿՈՏԱՅՔ/2022/ՇԻՆ»	ՀՀ ոստիկանության Կոտայքի ՄՎ Կոտայքի ՈԲ ընթացիկ շին-վերանորոգման և պահպանման աշխատանքներ	31,164,076
2	Մուրադյան «Շին» ՍՊԸ	07.09.2022թ.«ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՇԻՆ/ՊԾ/2022/Հ-66-1»	ՀՀ ոստիկանության Կոտայքի ՄՎ վարչական շենքի 1-ին հարկ ընթացիկ շին-վերանորոգման և պահպանման աշխատանքներ	19,080,000
3	«Լ.Վ.Մ.» ՍՊԸ	07.09.2022թ.«ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՇԻՆ/ՊԾ/2022/Հ-66-2»	ՀՀ ոստիկանության Կոտայքի ՄՎ Նաիրի ՈԲ վարչական շենքի 1-ին հարկի ընթացիկ շին-վերանորոգման և պահպանման աշխատանքներ	8,047,590
4	Մուրադյան «Շին» ՍՊԸ	07.09.2022թ.«ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՇԻՆ/ՊԾ/2022/Հ-66-1»	ՀՀ ոստիկանության Կոտայքի ՄՎ Չարենցավանի ՈԲ վարչական 2-րդ մասնաշենքի ընթացիկ շին-վերանորոգման և պահպանման աշխատանքներ	11,764,391
5	«Որդի Տարոն» ՍՊԸ	07.09.2022թ.«ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՇԻՆ/ՊԾ/2022/Հ-66-3»	ՀՀ ոստիկանության Ճանապարհային ոստիկանության ենթակա Կոտայքի մարզ Վերին Պտղնի և Երևան-Սևան ավտոճանապարհի 12/2 հասցեում տեղակայված ստորաբաժանման ընթացիկ շին-վերանորոգման և պահպանման աշխատանքներ	7,572,330
	Արագածոտնի մարզ պարեկային ծառայություն			
1	«Մարզանդ» ՍՊԸ	07.10.2022թ. «ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-57-ԱՐԱԳԱԾՈՏՆ/2022/ՇԻՆ/1»	ՀՀ ոստիկանության Արագածոտնի ՄՎ Աշտարակի ՈԲ 1-ին հարկի ընթացիկ շին-վերանորոգման և պահպանման աշխատանքներ	10,340,315
2	«Մարզանդ» ՍՊԸ	07.10.2022թ. «ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-57-ԱՐԱԳԱԾՈՏՆ/2022/ՇԻՆ/1»	ՀՀ ոստիկանության Արագածոտնի ՄՎ Ապարանի ՈԲ վարչական շենքի 1-ին հարկի ընթացիկ շին-վերանորոգման և պահպանման աշխատանքներ	6,560,587
3	«Տարոն-ԳԳ» ՍՊԸ	07.10.2022թ. «ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-57-ԱՐԱԳԱԾՈՏՆ/2022/ՇԻՆ/2»	ՀՀ ոստիկանության Արագածոտնի ՄՎ Թալինի ՈԲ վարչական շենքի 1-ին հարկի ընթացիկ շին-վերանորոգման և պահպանման աշխատանքներ	8,754,000
4	«Մարզանդ» ՍՊԸ	07.10.2022թ. «ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-57-ԱՐԱԳԱԾՈՏՆ/2022/ՇԻՆ/1»	ՀՀ ոստիկանության Արագածոտնի ՄՎ ՕԿԿ ընթացիկ շին-վերանորոգման և պահպանման աշխատանքների ընթացիկ շին-վերանորոգման և պահպանման աշխատանքներ	9,400,000
	Գեղարքունիքի մարզ պարեկային ծառայություն			
1	«Էդինգ» ՍՊԸ «Մենքոնսթրաքթ» ՍՊԸ	01.08.2022թ. N «ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-53-ՄԱՐԶԵՐ/2021/ՇԻՆ»	ՀՀ ոստիկանության «ճանապարհային ոստիկանության» ծառայության 2-րդ սպայական գումարտակի Սևանի անշարժ պահակակետի շենքի ընթացիկ շին-վերանորոգման աշխատանքներ	8,375,112
2	«Էդինգ» ՍՊԸ «Մենքոնսթրաքթ» ՍՊԸ	01.08.2022թ. N «ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-53-ՄԱՐԶԵՐ/2021/ՇԻՆ»	ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի ՄՎ Գավառի ՈԲ վարչական շենքի ընթացիկ շին-վերանորոգման աշխատանքներ	18,721,104
3	«Արստոն» ՍՊԸ	06.09.2022թ. «ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ/ՏԱՎՈՒՇ/2022/Հ-68-1»	ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի ՄՎ Մարտունու ՈԲ վարչական շենքի ընթացիկ շին-վերանորոգման աշխատանքներ	9,200,000

4	«Որդի Տարոն» ՍՊԸ	06.09.2022թ. «ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ/ՏԱՎՈՒՇ/2022/Հ-68-2»	ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի ՄՎ Վարդենիսի ՈԲ ընթացիկ շին-վերանորոգման աշխատանքներ	14,100,000
	<u>Տավուշի մարզ պարեկային ծառայություն</u>			
1	«Էդինգ» ՍՊԸ «Մենքոնսթրաքթ» ՍՊԸ	01.08.2022թ. N «ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-53-ՄԱՐԶԵՐ/2021/ՇԻՆ»	ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Տավուշի ՈԲ վարչական շենքի ընթացիկ շին-վերանորոգման և պահպանման աշխատանքներ	6,839,568
2	«Մենքոնսթրաքթ» ՍՊԸ	06.09.2022թ. «ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ/ՏԱՎՈՒՇ/2022/Հ-68-3»	ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Նոյեմբերյանի ՈԲ վարչական շենքի ընթացիկ շին-վերանորոգման աշխատանքներ	8,020,596
3	«Էդինգ» ՍՊԸ «Մենքոնսթրաքթ» ՍՊԸ	01.08.2022թ. N «ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-53-ՄԱՐԶԵՐ/2021/ՇԻՆ»	ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Իջևանի ՈԲ վարչական շենքի ընթացիկ շին-վերանորոգման աշխատանքներ	19,192,212
4	«Էդինգ» ՍՊԸ «Մենքոնսթրաքթ» ՍՊԸ	01.08.2022թ. N «ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-53-ՄԱՐԶԵՐ/2021/ՇԻՆ»	ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Դիլիջանի ՈԲ վարչական շենքի ընթացիկ շին-վերանորոգման աշխատանքներ	7,619,220

ՀՀ ոստիկանություն

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ/ՆԿԱՏԱՌՈՒՄ

ՀՀ Ոստիկանության բարեփոխումների ռազմավարության գործողությունների ծրագրի կատարման ընթացքի գնահատման արդյունքների վերաբերյալ

Հ/հ	Գործողություն/ Դիտարկում	Դիտարկումների վերաբերյալ նկատառումներ
1	**Ռազմավարության հաշվետվության.** 1-ին Ամփոփագիր բաժին- Այս գնահատումը Ռազմավարության գործողությունների ծրագրի աշխատանքների համակարգման թերացումներ է նաև արձանագրում, որոնք կարող են հանգեցնել ռեսուրսների ոչ նպատակային օգտագործման, և կարող են առաջացնել վատնման և/կամ յուրացման ռիսկեր:	Ձևակերպումը առաջարկում ենք փոքր ինչ խմբագրել և շարադրել այս խմբագրությամբ- Այս գնահատումը Ռազմավարության գործողությունների ծրագրի աշխատանքների համակարգման թերացումներ է նաև արձանագրում, որոնք կարող են հանգեցնել ռեսուրսների ոչ նպատակային օգտագործման
2	2-րդ՝ Հայաստանի Հանրապետության Ոստիկանության բարեփոխումների ռազմավարության գործողությունների 2020-2022 թթ. Ծրագիրի կառուցվածք բաժին - **Գործողությունների ծրագրով նախատեսված գործողությունների շուրջ կեսը, այս գնահատման դրությամբ, չի իրականացվել** (մանրամասները ներկայացված են այս գնահատման հաշվետվության մաս կազմող Հավելված 1-ում:)**:** Վերջիններիս զգալի մասի գծով աշխատանքներ ընդհանրապես կատարված չեն, իսկ մնացյալը գտնվում են նախագծային (եթե իրավական ակտի ընդունում էր նախատեսված) փուլում կամ որոշակի քայլեր են իրականացվել,	Հավելված 1-ում կան գնահատումներ, որոնք վերանայման կարիք ունեն, արդյունքում պատկերը կարող է փոխվել: Առաջարկում ենք վերանայել որոշ գործողությունների վերաբերյալ տեղեկատվությունը

	որոնք կամ դադարել են և/կամ նախատեսված գործողության ամբողջական կատարման չեն հանգեցրել: **Պլանավորված գործողությունների հաջորդ կեսի գերակշիռ մասը իրականացվել է նախատեսված ժամկետներից զգալի շեղումներով:** Նման զգալի ժամկետային խախտումները կարող են ունենալ, ինչպես օբյեկտիվ (օրինակ, համավարակ և պատերազմ), այնպես էլ սուբյեկտիվ պատճառներ (օրինակ, թերի ֆինանսական պլանավորում, ինչը նաև բխում է գործողությունների ծրագրի ոչ արդյունավետ համակարգումից): Թե որ պատճառներն են նշանակալի դեր կատարել Գործողությունների ծրագրի մեծ մասի չկատարման, թերակատարման և/կամ պլանավորված ժամկետներից զգալի շեղումներով կատարման մեջ, այս գնահատման արդյունքում հնարավոր չի եղել պարզել:	Այստեղ կարելի է ներառել նաև ղեկավար կազմի փոփոխությունները, աշխատանքների համակարգման փոխանցումը, որը օբյեկտիվ պատճառով հանգեցնում է որոշակի աշխատանքների դանդաղեցման:
3	3-րդ՝ Ռազմավարության գործողությունների ներառվածությունը Կառավարության ծրագրերում և ֆինանսական պլաններում (ՄԺԾԾ-ներ և տարեկան բյուջեներ): - նախատեսվել է, որ ՆԳՆ ստեղծման օրենսդրական փաթեթը պետք է ընդունվի ԱԺ կողմից մինչև նշված ժամկետը: Դիտարկում՝**Գնահատման պահի դրությամբ համապատասխան օրենսդրական փաթեթը ԱԺ**	Քանի որ գնահատման նախաբանում նշված է, որ գնահատումը ներառում է այն բոլոր միջոցառումները, որոնք նախաձեռնվել և/կամ իրականացվել են ռազմավարության գործողությունների ծրագիրը հաստատելու օրվանից մինչև 2022 թ. հոկտեմբեր ամիս: Առաջակում ենք խմբագրել կամ ավելացնել նոր նախադասություն այս շարադրանքով՝ դեկտեմբեր ամսին, երբ խմբագրվում էր գնահատումը, փաթեթն արդեն ընդունվել էր առաջին ընթրցմամբ:

	չի ուղարկվել:	Կառավարության ծրագրի ժամկետին համահունչ է կատարվել, ԱԺ-ն արդեն ընդունել է փաթեթը:
4	3-րդ բաժին- Ռազմավարության գործողությունների ծրագրի 4-րդ ուղղությամբ նախատեսված է **Ոստիկանական զորքերի ապառազմականացում (նաև համապատասխան օրենքի ուժը կորցրած ճանաչում և մինչև 2022 թվականի ավարտ ոստիկանական զորքերի վերափոխում ազգային գվարդիայի՝ առնվազն 30%-ի վերպատրաստման միջոցով), որի ուղղությամբ այս գնահատման պահի դրությամբ որևէ նշանակալի գործողություն չի իրականացվել:** Ոստիկանական զորքերի ապառազմականացման մասին նշված չէ նաև Կառավարության ծրագրի վերոնշյալ 5.4 բաժնում: Կառավարության միջոցառումների ծրագրի Ոստիկանություն բաժնի թիվ 2.2 միջոցառումը նախատեսում է **Ոստիկանության զորքերի կառուցվածքի և ֆունկցիոնալության վերանայում,** նաև համապատասխան օրենսդրական նախագծերի կազմում մինչև 2022 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ: **Օրենսդրական նախագծերի էլեկտրոնային E-draft համակարգում, այս գնահատման պահի դրությամբ, նման նախագիծ (ներառյալ, համապատասխան օրենքի ուժը կորցրած**	Այս առումով տեղի է ունեցել հանրային քննարկում, 2022 թ.հոկտեմբերի 27 -ին և այս գործողության առումով գոնե աշխատանքային քննարկումները սկսվել են և հաշվի առնելով գնահատման ժամանակահատվածը, կարելի է ներառել նաև քննարկումների կազմակերպումը , որոնք իրականացվել են գույքագրելու համար հիմնական կարիքները: https://moj.am/article/3317?fbclid=IwAR3Ic4gERZGWMXETDR9FJgSKzEpVyYITf2W_g5QwZUUQrwjHxDG0poxNrb4

	ճանաչում) տեղադրված չի եղել:	
4	4.2 բաժին -Պարեկային ծառայության փուլային գործարկում – Դիտարկում՝ Ամերիկյան կողմի տրամադրած նյութական աջակցությունը՝ սարքավորումներ, ներառում է նաև հարյուրավոր պլանշետներ, որոնցից շուրջ կեսը հաջորդիվ դարձել են անսարք, որի պատճառներից է դիտարկվում նաև դրանց ոչ պատշաճ օգտագործումն ու սպասարկումը: Ինչը պարեկային ծառայության աշխատանքների համակարգման բացերի հետևանք կարող է լինել	Կարծում ենք կարելի է վերաձևակերպել, շարադրել այս խմբագրությամբ - օգտագործման ժամանակ տեխնիկական կանոններ են խախտվել: Սակայն, եթե կա արձանագրություն, որ բացերի հետևանք է , այլ ոչ թե դիտարկման արդյունքում եզրահանգում, ապա թողնել նույնը:
5	Ուղղություն՝ Ոստիկանության զորքերի ապառազմականացում, հասարակական կարգի պահպանություն Թիրախ՝ Քաղաքացիական վերահսկողության տակ գտնվող և մասնագիտացված ոստիկանության զորքերի ապահովում- Գնահատման պահի դրությամբ կատարված չէ: Դիտարկում՝ Ոստիկանության զորքերի գործառույթները չեն վերանայվելու, այդ թվում՝ ապառազմականացում տեղի չի ունենալու:	Հետաձգումը պայմանավորված է եղել ՆԳՆ փաթեթի մշակմամբ, որով ի վերջո հստակեցվել է զորքերի կարգավիճակը: Նախագծով և արդեն հաստատված օրենքով այս ձևակերպումն է http://www.parliament.am/draftreading_docs8/K-442-8_DR2.pdf Ոստիկանության կառուցվածքային ստորաբաժանում է»
6	Ուղղություն՝ Ոստիկանություն ռեֆորմի իրականացման ընթացք և միջազգային համագործակցություն	Ստորև որոշ հղումներ տարբեր ժամանակահատվածներում թե Արդարադատության նախարարության ներկայացուցիչների և թե ոստիկանության իրավասու պաշտոնյաների կողմից հարցազրույցների, բանավեճի,

	Արդյունքային ցուցանիշ 1 . Հիմքային՝ 0, 2021 թ. ոստիկանության ծառայողների 60%ը իրազեկվել է նոր ոստիկանության տեսլականի մասին: 2021թ.՝ առնվազն 2 կարճ ուսուցողական և տեղեկատվական տեսանյութ պարեկային ծառայության և ՕԿԿ մասին: 2022թ.՝ առնվազն 10 հեռուստահաղորդում և հանրային բանավեճ: Դիտարկում ՝ Պարզել արդյոք առկա են ուսուցողական և տեղեկատվական տեսանյութերի, ինչպես նաև հեռուստահաղորդումների և բանավեճերի էլեկտրոնային հղումներ:	ասուլիսի, տեղեկատվական նյութերի վերաբերյալ, որոնք տեղադրվել են Ոստիկանության և Արդարադատության նախարարության էջերում: https://www.moj.am/article/3202 https://www.moj.am/article/2915 https://www.youtube.com/watch?v=z4i25ZcNLSg https://www.youtube.com/watch?v=hzvylBeWHUE https://www.youtube.com/watch?v=8SBQtvo-coU https://www.youtube.com/watch?v=ktO-UltUwms https://www.youtube.com/watch?v=GZiZJ6ez0po https://www.youtube.com/watch?v=73dk4G-yu2g https://www.moj.am/article/2933 https://www.moj.am/article/2939 https://www.moj.am/article/3004
	Թիրախ՝ Բարեփոխումների իրականացումը մշտադիտարկող և գնահատող բազմաշահառու խորհրդի կողմից գործընթացի պատշաճ համակարգում Գործողություն - Հանրային վստահության մակարդակի և ոստիկանության միջոցառումների ազդեցության վերաբերյալ պարբերական հարցումների իրականացում Արդյունքային ցուցանիշ՝	Ինչպես արդեն նախանշված է հաշվետվության մեջ, այս ուղղությամբ ԵԱՀԿ -ն արդեն իսկ իրականացրել է հարցումները և ունենք բավականիննշանակալի արդյունք: Նշենք, որ այս գործընթացն իրականացվել է Ոստիկանության և Արդարադատության նախարարության պատվերով, արդյունքները բավականին դրական են , այս առումով կարող եք արդյունքները ստանալ կամ ծանոթանալ դրանց հետ ԵԱՀԿ առաքելությունից, առաջիկայում նախատեսվում է իրականացնել ևս մեկ հարցում: Կարծում ենք այս առումով կատարողականը առկա է

	Ոստիկանության բարեփոխումների և միջոցառումների վերաբերյալ տարեկան իրականացվել է հանրային կարծիքի առնվազն 1 հարցում	